

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2011թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՎԱՆԱԶՈՐ 2012թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2011թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ		3
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ		5
1.	ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ	7
	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	12
2.	2.1. Կրթություն և մշակույթ	12
	2.2. Առողջապահություն	14
	2.3. Սոցիալական պաշտպանություն	17
	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	22
3.	3.1. Գյուղատնտեսություն	22
	3.2. Բնապահպանություն	25
	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	28
4.	4.1. 2011թ ՀՀ պետական բյուջեով Լոռու մարզում նախատեսված շինարարական աշխատանքները	28
	ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	31
5.	5.1. Ճանապարհաշինություն	31
	5.2. Զրամատակարարում ու ջրահեռացում	32
	5.3. Գազամատակարարում	34
	5.3.1 Էլեկտրամատակարարում	34
	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	35
6.	6.1. Տարածքային կառավարում	35
	6.2. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում	36
	6.3. Քաղաքացիական հասարակություն	38
7.	ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	40
	ՀԱՎԵԼՎԱԾ 1. «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով 2011թ. ընթացքում Լոռու մարզում իրականացված աշխատանքներ	46
	ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀՀ 2011թ. պետ. բյուջեով (Լոռու մարզ) ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների	47
	ՀԱՎԵԼՎԱԾ 3. 2011թ. ընթացքում Լոռու մարզի համայնքներում այլ աղբյուրներով ֆինանսավորված ծրագրերի իրականացման վերաբերյալ	50

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Լոռու 2010-2013թթ. ՄԶԾ շրջանակում ստեղծված մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից Լոռու մարզային զարգացման ծրագրի 2011թ. Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների և իրականացված աշխատանքների վերլուծության հիման վրա:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, որը կազմվել է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի, հաստատվել է ՀՀ Կառավարության 2009թ հոկտեմբերի 1-ի արտագնա նիստի թիվ 1130-Ն որոշմամբ:

ՄԶԾ-ի կազմման ընթացքում մարզպետարանում ձևավորվել են ոլորտային յոթ աշխատանքային խմբեր, որոնք համաձայն Լոռու մարզպետի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 49 Ա որոշման գործել են հետևյալ ուղղություններով.

- ❖ Մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն,
- ❖ Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում,
- ❖ Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր,
- ❖ Առողջապահություն և սոցիալական ապահովություն,
- ❖ Քաղաքաշինություն,
- ❖ Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում),
- ❖ Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն:

ՄԶԾ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

- ❖ Մարզի կայուն զարգացում,
- ❖ Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում,
- ❖ Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում,
- ❖ Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում,
- ❖ Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման նպաստավոր, հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտի ստեղծում,
- ❖ Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում,
- ❖ Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում,
- ❖ Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում,
- ❖ Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում,
- ❖ Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում,
- ❖ Մարզպետարանի կարողությունների ուժեղացում,
- ❖ Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում,
- ❖ Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում,
- ❖ Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում,
- ❖ Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում,
- ❖ մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում,
- ❖ Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011թ. մարտի 29-ի թիվ 38-Ա հրամանով հաստատվել է ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2011թ. Տարեկան աշխատանքային պլանը, որի նպատակն է աջակցել ՄՁԾ-ի իրականացման աշխատանքներին: ՏԱՊ-ի թիրախներն են.

- Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄՁԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:
- Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄՁԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ:
- Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում:
- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար:
- Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

Ընդհանուր առմամբ, ՏԱՊ-ում ներկայացված են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրված են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու է ՄՁԾ մոնիտորինգի համակարգը:

Այս հաշվետվության մեջ վերլուծված են ՄՁԾ ութ ոլորտներում («Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն», «Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի օգտագործում», «Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր», «Առողջապահություն և սոցիալական ապահովություն», «Քաղաքաշինություն», «Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում)», «Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն», «Արտաքին կապեր և միջազգային կազմակերպություններ») 2011թ. ՏԱՊ-ով նախատեսված և տարվա ընթացքում իրականացված միջոցառումների ամփոփ նկարագրությունը ըստ ոլորտների:

Հավելված 1-ում բերված է տեղեկատվություն «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում 2011թ. ընթացքում Լոռու մարզում իրականացված աշխատանքների վերաբերյալ:

Հավելված 2-ում բերված է տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով Լոռու մարզում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների վերաբերյալ:

Հավելված 3-ում բերված է տեղեկատվություն 2011թ. ընթացքում Լոռու մարզի համայնքներում այլ աղբյուրներով ֆինանսավորված ծրագրերի իրականացման վերաբերյալ:

2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻ

Ինչպես երևում է ստորև բերված աղյուսակից, Լոռու մարզի 2010-2013թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2011թ. համար պահանջվող գումարը **20,180.865 մլն** դրամ է, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **60, 000.43 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում **12,890.97 մլն** դրամ պետ բյուջեից, որից **1,326.0 մլն-ը՝** հրատապ աշխատանքների կատարման պլանով: 2011թ. իրականացվել է **59,598.50 մլն** դրամի աշխատանքներ, որից **12,495.66 մլն-ը** պետ. բյուջեից, այդ թվում **1,345.17 մլն** դրամի աշխատանքներ հրատապ ծրագրով:

Աղյուսակ 1.

« Լոռու մարզի 2011 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների

մլն դրամ

Հ/Հ	Ոլորտի անվանումը	2011թ. պլանավորված ֆինանսավորումը, այդ թվում			Իրականացված է 2011թ տարեկան, այդ թվում		
		Ընդամենը	2011թ. Պետական բյուջեից		Ընդամենը	2011թ. Պետական բյուջեի ֆինանսավորմամբ	
			Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագրով		Ընդամենը	Այդ թվում՝ հրատապ ծրագրով
1	Կրթություն	1,983.42	1,809.33	122.00	1,986.94	1,812.85	125.52
2	Մշակույթ	343.02	325.72	85.00	354.52	337.22	96.50
3	Սպորտ	35.59	0.00	0.00	35.59	0.00	0.00
4	Առողջապահություն	183.35	183.35	0.00	165.34	165.34	0.00
5	Սոցիալական պաշտպանություն	39.13	39.13	25.00	39.13	39.13	25.00
6	Գյուղատնտեսություն և բնապահպանություն	721.24	18.00	18.00	562.30	16.00	16.00
7	Քաղաքաշինություն	8,272.46	8,145.00	505.00	10,256.21	8,128.75	488.75
	7.1.Բնակարանաշինություն	7,650.43	7,640.00	0.00	7,662.93	7,652.50	12.50
	7.2. Այլ ոլորտներ	622.03	505.00	505.00	2,593.28	476.25	476.25
8	Ենթակառուցվածքներ	4,729.44	2,370.44	571.00	3,719.17	1,996.37	593.40
	8.1 Ճանապարհներ	2,170.77	2693.828	435.00	1,804.30	1,804.30	465.00
	8.2 Զրամատակարարում	2,475.24	116.24	83.00	1,742.60	112.10	78.86
	8.3 Գազիֆիկացում	83.43	83.43	53.00	79.97	79.97	49.54
	8.4 Էլեկտրամատակարարում	0.00	0.00	0.00	92.30	0.00	0.00
9	Արդյունաբերություն և մասնավոր հատված	43,692.78	0.00	0.00	42,479.30	0.00	0.00
Ընդամենը		61,563.30	12,890.97	1,326.00	59,598.50	12,495.66	1,345.17

**ՀՀ Լոռու մարզի 2011 թվականի զարգացման ծրագրի
ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների**

մլն դրամ

Հ/Հ	2011 թվականի զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ ֆինանսավորման աղբյուրների	2011թ. պլանավորված ֆինանսավորումը	Իրականացված է 2011թ.
	Ընդամենը մարզում՝	60,000.43	59,598.50
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ, այդ թվում	12,890.97	12,495.66
	❖ ՀՀ մշակույթի նախարարություն	35.00	35.00
	❖ ՀՀ քաղաքաշինության նախարարություն	473.40	473.40
	❖ «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի մասով	7,640.00	7,640.00
	❖ ՀՀ կրթության և գիտության նախարարություն	132.60	132.60
	❖ ՀՀ առողջապահության նախարարություն	57.50	39.49
	❖ Դպրոցաշինության ԾԻԳ ՊՀ	890.06	890.06
	❖ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	1,383.53	1,028.60
	❖ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	284.24	242.70
	❖ ՀՄՆՀ	556.08	556.08
	❖ «Հայաստան» համահայկական հիմնադրամ	30.43	30.43
	❖ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ, այդ թվում	1,408.13	1,427.30
		<i>ՀՀ Լոռու մարզպետարան (Հրապարակ ծրագիր)</i>	<i>1,326.00</i>
II	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ	399.82	404.82
III	ՄԱՍՆԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ, ԴՈՆՈՐՆԵՐ	44,070.78	44,931.60
IV	ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ	89.42	89.42
1.	«ՀՄՀ-Հայաստան»	89.42	89.42
V	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	285.44	141.50
1.	ՓՐԿԵՑԵՔ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ	41.00	41.00
2.	«ՇԵՆ» ԲՀԿ ԵՎ CHF (համատեղ)	63.00	63.00
3.	Շվեյցարական «Կազա» հիմնադրամ	0.00	7.50
4.	USID «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագիր	181.44	30.00
VI	ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	2,264.00	1,535.50
1.	KFW-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ	1,623.00	1,250.00
2.	«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ» ԵՎ «ԱՄԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ» ԾՐԱԳՐԵՐ	641.00	285.50

1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության առաջատար բնագավառի՝ արդյունաբերության մասով 2010-2013թթ. Լոռու մարզի ՄՁԾ-ով կարիքի գնահատում չի կատարվել, քանի որ այս բնագավառում ներդրումների բացարձակ մեծամասնությունն ընկնում է մասնավոր հատվածի վրա, իսկ 2009 թվականին՝ ՄՁԾ-ի կազմման ժամանակ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չէր գոնե մոտավոր կանխատեսել ճյուղի զարգացման հիմնական ուղղությունները, ներդրումների չափերը:

2011 թվականի համար մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից իրատեսական է համարվել պլանավորվել 408.0 մլն դրամի և 114.51 մլն. ԱՄՆ դոլարի ներդրումներ, մասնավորապես.

- ❖ հանքարդյունաբերություն 114.0 մլն. ԱՄՆ դոլար
(«Թեղուտ» և «Սագամար» ՓԲԸ-ներ)
- ❖ մետալուրգիայում 400.0 մլն դրամ
(«Էյ-Սի-Փի» ՓԲԸ)
- ❖ քիմիական արդյունաբերությունում 0.51 մլն ԱՄՆ դոլար
(«Վանաձոր-Խիմպրոմ» ՓԲԸ)
- ❖ թեթև արդյունաբերությունում 8.0 մլն դրամ:
(«Բազում-Ֆիրմա» ԱԿ)

2011 թվականին, ըստ մարզի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններից ստացված տեղեկատվության, մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից նախատեսված 43,921.80 մլն դրամի (408.00 մլն դրամ և 114.51 մլն ԱՄՆ դոլար) դիմաց իրականացվել է ընդամենը 41,313.80 մլն դրամի (338.60 մլն դրամ և 108.40 մլն ԱՄՆ դոլար) ներդրումներ, մասնավորապես.

- ❖ հանքարդյունաբերություն
 - ✓ «Թեղուտ» ՓԲԸ 36100 մլն ՀՀ դրամ կամ 93.8 մլն ԱՄՆ դոլար
 - ✓ «Սագամար» ՓԲԸ 14.60 մլն ԱՄՆ դոլար
 - ✓ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ 40.00 մլն դրամ
- ❖ Մետալուրգիա
 - ✓ «Էյ-Սի-Փի» ՓԲԸ 550.00 մլն դրամ, որից 360.0 մլն դրամը բնապահպանական խնդիրների լուծման համար
- ❖ Քիմիական արդյունաբերություն
 - ✓ «Վանաձոր-Խիմպրոմ» ՓԲԸ 83.6 մլն դրամ
- ❖ թեթև արդյունաբերությունում
 - ✓ «Բազում-Ֆիրմա» ԱԿ 25.00 մլն դրամ

Բացի այդ, ըստ Վանաձորում գործող բանկերի մասնաճյուղերից ստացված տեղեկատվության, 2011 թվականին մարզի փոքր և միջին արտադրությունների կողմից նոր արտադրամասերի բացման, արտադրական սարքավորումների վերազինման, նաև շրջանառու միջոցների ձեռքբերման նպատակով ներգրավվել է 1,165.5 մլն դրամի վարկային միջոցներ:

Այսպիսով 2011 թվականին մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից ներդրումների (այդ թվում բնապահպանական նպատակներով) ընդհանուր ծավալը կազմել է 42,479.30 մլն դրամ կամ 1,504.10 մլն դրամ և 108.40 մլն ԱՄՆ դոլար:

Հաշվետու տարում ներդրումների գերակշիռ մասն ուղղվել է նոր ժամանակակից սարքավորումների ձեռքբերման, արտադրական շենք-շինությունների կապիտալ

վերանորոգման, նաև բնապահպանական խնդիրների լուծման վրա: Արդյունքում մարզում բացվել է մոտ 400 նոր աշխատատեղ (հիմնականում «Սագամար» ՓԲԸ-ի կողմից), 2012 թվականին մարզի արդյունաբերության թողարկվող արտադրանքի ծավալները կլինեն աննախադեպ բարձր մարզի պատմության ողջ ընթացքում:

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2011 թ. ՄԶԾ-ով առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործնթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

- ✓ ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում,
- ✓ Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգային դրույթների իրականացում,
- ✓ ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի կազմակերպում:

Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Ստեփանավանի մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:

ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2011թ ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ աջակցությունները՝

- ✓ Տեղեկատվական և գործարար ուղեցույցների տրամադրում - 15 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ Տեղեկատվական աջակցություն - 124 սուբյեկտ և անհատ
- ✓ Իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն - 62 ՓՄՁ սուբյեկտ
- ✓ Սկսնակ գործարարների աջակցության ծրագիր - 18 անհատ
- ✓ Ապրանքների և մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնղման աջակցության ծրագիր - 2 ՓՄՁ սուբյեկտ

Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը, մարզպետարանը համագործակցում է Լոռու մարզի առևտրաարդյունաբերական պալատի հետ, որը համագործակցելով տարբեր կառույցների հետ, իրականացնում է մի շարք միջոցառումներ, մասնավորապես.

- աջակցություն է ցուցաբերում «Գործարարության զարգացման եւ օժանդակման կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող շարունակական նախագծերին՝ հանրակրթական համակարգում Ինֆորմատիկա առարկայի ֆակուլտատիվ պարապմունքների և մրցույթների կազմակերպման, ինչպես նաև ուսուցիչների համար պարբերաբար կազմակերպվող մասնագիտական վերապատրաստումներին
- Դպրոցական համակարգում Ինֆորմատիկա առարկայի **ֆակուլտատիվների եւ մրցույթների կազմակերպում**, պարբերաբար կազմակերպվող մասնագիտական վերապատրաստումներին

զուգընթաց լուրջ ներդրում ունեցող մասնագետներից առաջադրվել են մասնակցել Հնդկաստանում SS վերապատրաստման դասընթացներին:

- Կնքվել են Համագործակցության համաձայնագրեր Ալավերդու քաղաքապետարանի եւ «Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ-ի միջեւ՝ երկու համայնքներում գործարար քարտեզագրման աշխատանքների համատեղ իրականացման վերաբերյալ:
- SS ոլորտում որպես հաջողված արդյունք կարելի է նշել Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ մի շարք քննարկումները (հուլիս 2010թ.), որի արդյունքում «Ինստիգեյթ» ՓԲԸ-ն կազմակերպեց հատուկ դասընթացներ 2011թ-ին (5 ամիս տևողությամբ) ՀՊՃՀ Վանաձորի մասնաճյուղում: Դասընթացի մասնակիցների հետ (10 շրջանավարտ) կնքվել է աշխատանքային պայմանագիր: 2011թ. դեկտեմբերին Վանաձորում բացվեց «Ինստիգեյթ» ՓԲԸ-ի մասնաճյուղ:
- «Ա2» ՍՊԸ մասնաճյուղի ղեկավարի հետ քննարկվել է Վանաձորում տեխնոպարկի ստեղծման գաղափարը,

Հաշվի առնելով ԼՄ ԱԱՊ-ի գործունեության ռազմավարության որոշակի փոփոխությունները, SS ոլորտի զարգացման նոր հեռանկարային նախագծերը քննարկման փուլում են:

Լոռու ՄՁԾ-ի 2011թ. համար կարիքների գնահատման և 2011թ. ՏԱՊ-ում ընդգրկված ներդրումային ծրագրերի համադրումը ՓՄՁ և մասնավոր հատված ոլորտում

Ոլորտը/Ֆինանսավորման աղբյուրը	2011 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի (մլն. դրամ)	2011թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջե (մլն. դրամ)	ՄՁԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը/ճեղքվածք (մլն. դրամ)	Իրականացվել է 2011թ.
1. ՓՄՁ և մասնավոր հատված	0.0	408.0	+408.0	1,504.1 մլն դրամ
		114.51 մլն ԱՄՆ դոլար		108.4 մլն ԱՄՆ դոլար
<i>որից՝</i>				
Պետական բյուջե				
Միջազգային, բարեգործական, դոնոր կազմակերպություններ				
Համայնքների ներդրումներ				
Մասնավոր ընկերությունների ներդրումներ	0.0	408.0		1,504.1 մլն դրամ
		114.51 մլն ԱՄՆ դոլար		108.4 մլն ԱՄՆ դոլար

Ներդրումները պլանավորվում են իրականացնել մարզի արդյունաբերության այն ճյուղերում, որոնց արտադրանքի գերակշիռ մասն իրացվում է արտերկրում: Միջազգային շուկայում բարենպաստ զարգացումների դեպքում ընթացիկ տարում հնարավոր է նաև ներդրումների ծավալի զգալի աճ արդյունաբերության այլ ճյուղերում՝ մասնավորապես էներգետիկայում, մեքենաշինության ու սարքաշինության մեջ: Արդյունքում շուրջ 25%-ով կաճի արտահանման ծավալները, կբացվեն ավելի քան 400 նոր աշխատատեղ:

Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող կարևոր գործոններից է Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ընդունված մարզի գերակա ոլորտների զարգացման հայեցակարգային դրույթների հետևողական իրականացումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից

ծառայությունները: Մասնավորապես, 2010թ. մշակվել է ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 1-ի թիվ 1222-Ն որոշմամբ հայտարարված ‘ Հյուսիսային դարպաս’ զբոսաշրջության կենտրոնի (ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ընդգրկված Սանահինի, Հաղպատի վանական համալիրները, մարզի տարածքում գտնվող Լոռի բերդը, Հնեվանքի, Ախթալայի, Քոբայրի, Բարձրաքաշի, Դսեղի, Քառասնից մանկան, Արդվիի Սուրբ Հովհաննես վանական համալիրները, Օծունի, Բգավորի եկեղեցիները, Դսեղի Ծովեր Լիճը, ինչպես նաև Սանահինի, Հաղպատի, Օծունի, Դսեղի գյուղական ու Ախթալայի ու Թումանյանի քաղաքային համայնքները) զարգացման ծրագիրը՝ համապատասխան հայեցակարգային նպատակներին ու գերակա խնդիրներին:

2011թ մայիսի 23-ին Լոռու մարզպետարանում Պրովանս-Ալպ Կոտ դ’Ազյուր (ՊԱԿԱ) Ռեգիոնալ խորհրդի պատվիրակության հետ այլ հարցերի թվում քննարկվել է նաև «Հյուսիսային դարպաս» ծրագրի իրականացման համար ՊԱԿԱ-ի ֆինանսական աջակցության հնարավորությունները: Հանդիպման արդյունքում պատրաստվել է Մտադրությունների արձանագրություն: Որոշակի աշխատանք է տարվել նաև մարզում էկոտուրիզմի և տուրիզմի ոլորտում ձեռնարկատիրությամբ զբաղվողների մասնագիտական ունակությունների ու կարողությունների զարգացման բնագավառում:

2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2.1. Կրթություն և մշակույթ

2011թ. Լոռու մարզի կրթության ոլորտում շարունակվել է Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման պետական քաղաքականության իրականացումը, մասնավորապես, ելնելով աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի դրույթներից և հիմք ընդունելով Լոռվա մարզում կրթության ոլորտի առկա իրավիճակը՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվել է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Հատկապես ուշադրություն է դարձվել հանրակրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, 12-ամյա կրթության ուսումնական ծրագրերի, գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական և միասնական քննական համակարգի կատարելագործմանը, ավագ դպրոցների ինստիտուտի հիմնադրմանն ու կայացմանը: Շարունակվել և կատարելագործվել է հատուկ կրթական ու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ինտեգրման գործընթացը (ներառական կրթություն, որի նպատակով 2011թ. ՀՀ պետքույզեից հատկացնել է 62,915 մլն դրամ Վանաձորի թիվ 18 , Ստեփանավանի թիվ 1 եւ Ալավերդու դպրոցներում 107 երեխաների համար ներառական կրթություն իրականացնելու նպատակով):

2011թ. ՏԱՊ-ի համաձայն առաջին կիսամյակում շարունակվել են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների՝ որպես ինքնակառավարման մարմինների ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման, ավագ դպրոցների հիմնադրման, մարզում մարզամշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված ծրագիրը: Լոռու մարզի հանրակրթության ոլորտում 2011թ. ՏԱՊ նախատեսված աշխատանքներից 2011թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Կրթության ոլորտում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին միտված մարզի պարտուսի տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում հասցվել է 99,93%-ի:

- Ուսումնասիրվել է հանրակրթական ոլորտի պարտադիր ուսուցումից տարբեր պատճառներով դուրս մնացած երեխաների քանակը, որը կազմում է 18 երեխա կամ 0.07 %:
- Ներառական կրթություն է իրականացվել Վանաձորի թիվ 18 , Ստեփանավանի թիվ 1, Ալավերդու թիվ 5, թիվ 8 և Կուրթանի դպրոցներում 107 երեխաների համար:
- Կարևորելով ուսուցիչների մասնագիտական կարողությունների և հմտությունների անընդհատ կատարելագործման գործընթացը, 2011թ. իրականացվել է մարզի 723 ուսուցիչների վերապատրաստում՝ պարզ ընթացակարգով ատեստավորելու նպատակով:
- Դպրոցների տնօրենների ընտրության կարգի պահանջների համաձայն իրականացվել է մարզի 111 դպրոցների տնօրենների ընտրություններ:
- Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների կարգի և այլ հարցերով:
 - Մարզի սոցիալապես անապահով 9-13 տարեկան 300 աշակերտներ իրենց ամառային 20 օր տեղողությամբ հանգիստը անց են կացրել Հանքավանի «Լուսաբաց » ճամբարում: Տրանսպորտային բոլոր ծախսերը իրականացվել են «Լոռու դպրոց» և «Լոռու մշակույթ, սպորտ և երիտասարդություն» հիմնադրամների միջոցներով:
 - 2011թ. շրջանավարտ չլինելու պատճառով ՄԻԱՍՆԱԿԱՆ քննությունների նախապատրաստական աշխատանքներ են տարվել միայն նախորդ տարիների թվով 51 շրջանավարտների համար Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցում:
 - Մշակվել և իրագործման ընթացքի մեջ է մարզի տարածաշրջաններում 5 նոր ավագ դպրոցների հիմնադրմանն ուղղված համալիր աջակցության ծրագիրը:
 - Մշակվել և իրականացվել է մարզի դպրոցների 9-րդ դասարանների ավարտական պետական քննությունները պատշաճ մակարդակով կազմակերպելու, անցկացնելու և ընթացքը վերահսկելու ծրագիրը՝ հաստատված Լոռու մարզպետի կողմից:

Մարզի կրթության ոլորտում 2011թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **1983.42** մլն դրամի դիմաց տարվա ընթացքում իրականացվել է **1986.94** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեից նախատեսված **1809.33** (122.0 մլն հրատապ ծրագրով) մլն դրամի դիմաց՝ **1812.85** (125.52 մլն հրատապ ծրագրով) մլն դրամի աշխատանքներ: ՀՀ կրթության և գիտության նախարարության «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագրով նախատեսված «Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ –ի հիմնանորոգման 132.63 մլն դրամ ծավալով աշխատանքներն իրականացվել են ամբողջությամբ: Ամբողջությամբ իրականացվել են նաև 2011թ. ՏԱՊ-ով նախատեսված պետական բյուջեից ֆինանսավորվող մյուս բոլոր դպրոցների ու ուսումնական հաստատությունների հիմնանորոգման աշխատանքները:

Կրթության ոլորտում 2011թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2011թ. ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.11թ.	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	1,983.42	1986.94	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	1823.33	1812.85	
1.	Վանաձորի թիվ 24 դպրոցի հիմնանորոգում	80.0	80.0	
2.	Քարաձորի դպրոցի հիմնանորոգում	22.0	22.0	
3.	Դսեղի դպրոցի շենքի հիմնանորոգում	175.0	175.0	
4.	Վանաձորի թիվ 17 դպրոցի հիմնանորոգում	117.0	117.0	
5.	Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջի հիմնանորոգում	132.6	132.6	
6.	Ալավերդու արհեստագործական ուսումնարանի հիմնանորոգում	50.0	50.0	
7.	Վանաձորի թիվ 13 դպրոցի հիմնանորոգում	50.0	47.33	Հրատապ ծրագրով
8.	ք. Թումանյանի դպրոցի մարզադահլիճի հատակների նորոգում	12.0	8.29	Հրատապ ծրագրով
9.	Ճոճկանի մանկապարտեզի հիմնանորոգում	10.0	9.0	Հրատապ ծրագրով
10.	Արևաշողի մանկապարտեզի կառուցում	35.0	33.0	Հրատապ ծրագրով
11.	Ղուրսալի դպրոցի ջեռուցում	2.0	1.9	Հրատապ ծրագրով
12.	Սարահարթ դպրոցի ջեռուցում	13.0	12.0	Հրատապ ծրագրով
13.	Վանաձորի թիվ 7 դպրոցի տանիքի վերանորոգում	0.0	10.0	Հրատապ ծրագրով
14.	Ձորագյուղի մանկապարտեզի վերանորոգման համաֆինանսավորում	0.0	1.0	Հրատապ ծրագրով
15.	Անտառամուտի դպրոցի ջեռուցում	0.0	3.0	Հրատապ ծրագրով (II փուլ)
	«Դպրոցաշինություն ԾԻԳ» ՊՀ	890.06	890.06	
1.	Վանաձորի թիվ 22 դպրոցի մարզադահլիճի կառուցում	264.56	264.56	
2.	Սպիտակի թիվ 1 դպրոցի մարզադահլիճի կառուցում	296.04	296.04	
3.	Ստեփանավանի թիվ 6 դպրոցի մարզադահլիճի կառուցում	329.46	329.46	
II	ՀՍՆՀ	220.67	180.95	
1	Թեղուտի դպրոցի հիմնանորոգում	109.72	109.72	
2	Ալավերդու թիվ 4 դպրոցի ջեռուցման համակարգի վերակառուցում, տանիքի և սանհանգույցների վերանորոգում	27.10	27.10	
3	Ալավերդու թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում	83.85	83.85	
III	Այլ	174.09	174.09	
1	Թեղուտի մանկապարտեզի կառուցում	55.00	55.00	Համայնքի բյուջե
2	Վանաձորի թիվ 2 նախադպրոցական ուսումն. Հաստատության ՀՈԱԿ-ի նորոգում	14.00	14.00	Համայնքի բյուջե
3.	Սպիտակի թիվ 2 նախադպ.	7.50	7.50	Համայնքի բյուջե

	Ուսումն. հաստատության շենքի հիմնանորոգում			
4.	Ախթալայի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի նորոգում	16.00	16.00	Համայնքի բյուջե
5.	Ախթալայի «Սվինեց» թաղամասի նախադպ. Ուսումն. հաստատության նորոգում	16.50	16.50	Համայնքի բյուջե
6.	Տաշիրի նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի նորոգում	4.50	4.50	Համայնքի բյուջե
7.	Արևաշողի նախադպրոցական ուսումնական հաստատության շենքի կառուցում	9.59	9.59	Համայնքի բյուջե
8.	Գարգառի նախադպրոցական ուսումնական հաստատությունների անավարտ շենքերի ավարտում	10.00	10.00	Համայնքի բյուջե
9.	Վանաձորի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում	20.0	20.00	Փրկեցեք երեխաներին
10.	Սպիտակի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում	21.0	21.00	Փրկեցեք երեխաներին

2011թ. ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում են նաև մշակութային օջախների վերանորոգման և մշակութային միջոցառումների իրականացման աշխատանքները:

Մարզի մշակույթի ոլորտում 2011թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **343.02** մլն դրամի դիմաց տարվա ընթացքում իրականացվել է **354.52** մլն դրամի աշխատանքներ, այդ թվում պետ. բյուջեով նախատեսված **325.72** (85.0 հրատապ ծրագրով) մլն դրամի դիմաց իրականացվել է **337.22** մլն դրամի (որից 96.50 մլն դրամը՝ հրատապ ծրագրով) աշխատանքներ: ՀՍՆՀ-ով Խնկոյանի մշակույթի տան հիմնանորոգման համար նախատեսված 59.95 մլն դրամ ծավալներից 2011թ. իրականացվել է ամբողջովին՝ 59.95 մլն դրամի աշխատանքները:

Մշակույթի ոլորտում 2011 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2011թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2011թ ընթացքում	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	343.02	354.52	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	325.72	337.22	
1.	Ծաթեր համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում	15.8	15.8	
2.	Վանաձորի Հովհ. Աբեյյանի անվան Պետական դրամատիկական թատրոնի շենքի հիմնանորոգում	13.6	13.6	
3.	Օձունի վանքի վերանորոգում և վերականգնում	20.0	20.0	
4.	Քորայրավանքի վերանորոգում ու վերականգնում	15.0	15.0	
5.	ք. Վանաձորի Արվեստի քոլեջի վերանորոգում	35.0	34.0	Հրատապ ծրագրով
6.	Վանաձորի երկրագիտական թանգարանի վերանորոգում	50.0	62.5	Հրատապ ծրագրով
	ՀՍՆՀ	17632	176.32	
1.	Խնկոյանի մշակույթի տան <small>հ հ մ ն ան ո ռ ո գ ու մ</small>	59.95	59.95	
2.	Գյուլագարակի համայնքային կենտրոնի շենքի	116.37	116.37	

	կառուցում			
II	ԱՅԼ	17.30	17.30	
1.	Ագարակի ակումբի շենքի հիմնանորոգում	8,50	8.50	Համայնքի բյուջե
2.	Նեղոցի համայնքային կենտրոնի կառուցում	8.80	8.80	Համայնքի բյուջե

Մարզի սպորտի ոլորտում 2011թ. Համայնքային բյուջեներից նախատեսվել է կատարել ընդամենը 35.59 մլն դրամի աշխատանք, որը իրականացվել է ամբողջովին:

Սպորտի ոլորտում 2011 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2011թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2011թ ընթացքում	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	35.59	35.59	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	0.00	0.00	
II	ԱՅԼ	35.59	35.59	
1.	Վանաձորի ՕՀ մենապայքարային մարզադպրոցի ջեռուցման համակարգի ձեւափոխում	2.09	2.09	Համայնքի բյուջե
2.	Վանաձորի ՕՀ մենապայքարային մարզադպրոցի II հարկի վերակառուցում	20.00	20.0	Համայնքի բյուջե
3.	Տաշիրի մարզադաշտի կառուցում	6.00	6.00	Համայնքի բյուջե
4.	Ստեփանավանի մարզադպրոցի նորոգում	2.50	2.50	Համայնքի բյուջե
5.	Մարգահովիտի մարզադպրոցի նորոգում	5.00	5.00	Համայնքի բյուջե

2.2. Առողջապահություն

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ:

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ են համարվում բուժօժանությունների որակի և մատչելիության բարձրացումը: Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

- Տեղային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավում,
- Տարբեր մակարդակների բուժհաստատություններում մասնագետներով և սարքավորումներով հագեցվածության ապահովում,
- Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,
- Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատում,
- Սոցիալական հատուկ նշանակություն ունեցող և տարափոխիկ հիվանդությունների կանխարգելում,
- Շտապ բուժօգնության մատչելիության և սպասարկման որակի բարելավում,
- Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում,

- Նորածինների առողջության բարելավում, նորածնային հիվանդացության և մահացության կրճատում, մայրական մահացության կրճատում,
- Վաղ հասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցում, առողջ աճի և զարգացման ապահովում:

Այս միջոցառումներից շատերի իրականացումը շարունակական բնույթ ունի, բայց հիմնականում կախված է դոնոր կազմակերպությունների միջոցների և կառավարության շարունակական օժանդակության առկայությունից:

Համաշխարհային բանկի կողմից կշարունակվեն կազմակերպվող ընտանեկան բժիշկների և բուժքույրերի վերապատրաստման դասընթացները:

Մարզի առողջապահության ոլորտում 2011թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված **183.35** մլն դրամի դիմաց 2011թ. իրականացվել է **165.34** մլն դրամի աշխատանքներ: Պետ. բյուջեով նախատեսված «Ախթալայի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգման **57.50** մլն դրամի աշխատանքները չեն իրականացվել: Տարվա ընթացքում «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է 39.49 մլն դրամի ժամանակակից բժշկական սարքավորումներ:

Առողջապահության ոլորտում 2011 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2011թ. Ծրագրի (մլն դրամ)	Կատարվել է 2011թ ընթացքում	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	183.35	165.34	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	183.35	165.34	
1.	«Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցում	57.5	0.0	ՀՀ առողջապահ. նախարարության ԾԻԳ
2.	«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ	0.00	39.49	Բժշկական սարքավորումներ
	ՀՍՆՀ	125.85	125.85	
1.	Ալավերդու հիվանդանոցի հիմնանորոգում (II փուլ)	95,70	95.70	
2.	Վանաձերի թվ 2 հիվանդանոցի հիմնանորոգում	30.15	30.15	

2011թ. նախատեսված էր «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցումը, որի նպատակով ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից նախատեսված էր 57.50 մլն դրամ, սակայն ֆինանսավորման բացակայության պատճառով : շենքի կառուցման աշխատանքները 2011թ. չեն իրականացվել: Համայնքը 2.5 մլն դրամի ներդրումով կատարվել են շենքի կառուցման նախապատրաստական աշխատանքները: «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցման աշխատանքները նախատեսվում է սկսել 2012թ.:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցներով «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲԸ-ում իրականացվել են (հատկացվել է 30.15 միլիոն դրամ) նկուղային հարկի վերանորոգման աշխատանքներ: Ընկերության սեփական միջոցներով իրականացվել է մասնակի վերանորոգումներ՝ սրտաբանական բաժանմունքում ստեղծվել է ընդունարան, վերանորոգվել է համակարգչային տոմոգրաֆի համար նախատեսված տարածքը, դեղատան սենյակները:

2011թ. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից շարունակվել են «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար մասի շենքի հիմնանորոգման աշխատանքները (2-րդ փուլ), որի մեջ նախատեսված են նաև շենքի արտաքին կոյուղագծի աշխատանքները, նոր կաթսայատնով ջերմամատակարարման աշխատանքները, թափածոյան ամբարի կառուցման աշխատանքները՝ կենտրոնական սպասարկման ուղիներով: Այդ նպատակով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից հատկացվել է 95.7 մլն դրամ: 2-րդ փուլի աշխատանքներն ավարտվել են: Նախատեսվում է նաև «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիմնանորոգման 3-րդ փուլի աշխատանքների իրականացում, որի համար անհրաժեշտ է մոտ 320 մլն դրամ: Այդ նպատակով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից կհատկացվի է մոտ 130 մլն դրամ, մոտ 16 մլն դրամ ներ է դնելու «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, իսկ մնացած մոտ 190 մլն դրամի ձեռք բերման հարցը կարգավորման փուլում է:

ՀՄՆ հիմնադրամի և համայնքի 10 % համաֆինանսավորումով (3 մլն դրամ) 2011թ. սկսվել է «Շահումյանի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի նախկին շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացման ծրագրը (30 մլն դրամ ծավալով), որը նախատեսված է ավարտել 2012թ. մարտին:

2011թ. ՀՀ առողջապահության նախարարությունը ժամանակակից բժշկական սարքավորումներ է հատկացրել «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ 39,490.0 հազ.դրամ արժողությամբ, իսկ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ ժամանակակից բժշկական սարքավորումներ, կոշտ և փափուկ գույք:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն որոշման (Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. ապրիլի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 699-Ն որոշման խմբագրությամբ՝ կետ 3.1.), իրականացրել է «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲԸ-ի կազմից հակատուբերկուլոզային բաժանմունքի առանձնացման և այդ նույն բաժանմունքը՝ 15 մահճակալով «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ին միացնելու աշխատանքները: 2-րդ փուլով կատարվել է «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲԸ-ի և Լ.Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ի միաձուլում՝ ստեղծելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ :

Նոր բժշկական կենտրոնի գործունեության համար Վանաձոր քաղաքում նախատեսվում է կառուցել նոր շենք՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով և համապատասխան կադրերով: Այդ նպատակով Համաշխարհային բանկի կողմից կներդրվի մոտ 12 մլն ԱՄՆ դոլլար (մոտ 4,560.0 մլն ՀՀ դրամ):

«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կազմից հանվել և վերաբաշխվել է իր կազմում չգտնվող Ալավերդու տարածաշրջանի Արեւածագ, Կարմիր Աղեգի, Մղարթ, Ծաթեր և Կաճաճկուտ գյուղերի շտապ օգնության ծառայությունները՝ «Արևածագի ԱԱՊԿ» ՊՓԲԸ-ի և «Աքորու ԱԱՊԿ» ՊՓԲԸ-ի միջև, «Արևածագի ԱԱՊԿ» , որոնց տրամադրվել են մեկական սանիտարական մեքենաներ: Շտապ բուժօգնության համակարգի ներդրման շրջանակներում Լոռու մարզի շտապ բուժօգնության ծառայություն իրականացնող ընկերությունների տրանսպորտային պարկը համալրվել է 8 շտապ օգնության նոր գծային մեքենաներով, ժամանակակից սարքավորումներով հագեցած 1 ռեանիմոբիլով:

Նույն ծրագրի շրջանակներում պետական բյուջեի հաշվին վերապատրաստվել են շտապ բուժօգնության ծառայություն իրականացնող բժշկական հաստատությունների բժշկական անձնակազմը՝ 38 բժիշկներ, 36 բուժքույրեր, 36 վարորդներ:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում (նախկին Լ.Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր») մանկական վերակենդանացման բաժանմունք բացելու համար վերանորոգվել է տարածք: Մանկական վերակենդանացման բաժանմունքի համար «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի կողմից հատկացվել են որոշ բժշկական սարքավորումներ: Բժշկական ժամանակակից սարքավորումներ կհատկացվեն նաև ՀՀ առողջապահության նախարարության և «Վիվասել» ընկերության կողմից:

Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից տրամադրվել է շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում կստանան մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ողջ ազգաբնակչությունը: Շարժական կլինիկան հերթականությամբ կկայանվի մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակման կաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը:

2011թ. ազգային ծրագրի շրջանակներում ներ են դրվել երեխաների առողջության պետական հավաստագրերի համակարգը՝ 0-7 տարեկան երեխաների համար, նորացված շտապ բուժօգնության և համավճարի սկզբունքի ներդրման համակարգերը: Վերոնշյալ համակարգերի ներդրման արդյունքում ակնկալվում է ավելի որակյալ և մատչելի բուժօգնություն, սովերային դրամաշրջանառության բացառում:

Մարզում լիարժեք կայացել է և հաջողությամբ շարունակվում է ծննդօգնության հավաստագրերի ներդրման ծրագիրը:

2.3. Սոցիալական պաշտպանություն

ՄԶԾ-ում որպես ոլորտային նպատակ նախանշվել է բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը Լոռու մարզում, որին նպատակաուղղվել են յոթ ծրագրային ուղղություններով առաջարկված թվով 10 ծրագրերը, որոնց իրականացմամբ կբարելավվի հանրային իրազեկման մակարդակը, սոցիալական ծրագրերի իրականացումը և սոցիալական ծառայությունների կառավարումը, կընդլայնվեն բնակչության խոցելի խմբերին տրամադրվող սոցիալական ծառայությունները, մասնավորապես՝ տարեցների և հաշմանդամների շրջանում: Համագործակցության արդյունքում ենթադրվում է, որ կբարելավվի սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական բազան, շարունակաբար կընթանա սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի վերապատրաստման գործընթացը, որի ընթացքում կզարգացվեն ոլորտում զբաղվածների կարողությունները:

Մարզի սոցիալական ապահովության ոլորտում 2011թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված 39.13 մլն դրամ (25.0 մլն դրամ հրատապ ծրագրով) ծավալով բոլոր աշխատանքները իրականացվել են:

Սոցիալական ապահովության ոլորտում 2011 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2011թ. Ծրագրի (մլն դրամ)	Կատարվել է 2011թ ըթացքում	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	39.13	39.13	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	39.13	39.13	
1.	Վարձատրվող հասարակական աշխատանքներ	14.13	14.13	
2.	Ղուրսալի գյուղում բնակարանների գնում	25.00	25.00	Հրատապ ծրագրով

փախստականների համար (թվով 6 փախստական ընտախք)			
--	--	--	--

Ծրագրերի իրականացման ուղղությամբ 2011թ. կատարվել են հետևյալ աշխատանքները.

- **Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում** ծրագրի շրջանակներում մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, ՏԻՄ, ոչ պետական) սոցիալական աշխատանք կատարող կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ իրականացվել է 6 դասընթաց (որից՝ 5-ը ինտեգրված սոցիալական ծառայությունների մատուցման փորձնական ծրագրի շրջանակում)՝ 20 մասնագետների (Լոռու մարզպետարան, մարզի ՄԾՏՏՄ-ների մասնագետներ, համայնքների ներկայացուցիչներ մասնակցությամբ):
- Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում (ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը). ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ իրականացվել է սոցիալական 2 ծրագիր («Հայկական Կարիտաս»-ի «Սոցիալ-տնտեսական ինքնակազմակերպում գյուղական համայնքներում» ծրագիրը՝ Լոռու մարզի 5 գյուղական համայնքներում՝ Քարինջ, Դեբեդ, Սվերդլով, Ճոճկան և Հագվի, «Խաչվող ուղիներ» ՀԿ-ի կողմից իրականացվող «Բարին արա» ծրագիրը՝ Վանաձորում և Գուգարքի տ/շրջանի համայնքներում): Մարզի որոշ համայնքներ դրամական օգնություն են տրամադրել մի շարք ՀԿ-ների կամ կոնկրետ շահառուներին (Վետերանների խորհուրդ, Խուլերի կազմակերպություն և այլն):

Խոցելի խմբերի վերաբերյալ համայնքներում առկա է տեղեկատվական շտեմարաններ, որոնց հիման վրա համայնքներում ընթանում են օգնության ծրագրերը: Մասնավորապես՝ ՀՀ բուհերում սովորող ռիսկային խմբերի ուսանողներին աջակցություն՝ 54, ՀՀ պաշտպանության և մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների և ազատամարտիկների ընտանիքներին օգնություն՝ 199, Վանաձորի նախկին տնակային ավանների բնակիչներին բնակարանային վարձավճարի տրամադրում՝ 14 ընտանիք, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից տարեցների խնամքի և տաք սննդի տրամադրման աջակցություն՝ 448 և այլն:

- Կամավորների շարժման (կենտրոնի) զարգացում, երիտասարդության շրջանում կամավորական շարժման խթանում. ՀԿ-ների տարբեր ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը՝ 44 («Առավոտ» ՀԿ՝ 10, «Հայկական Կարիտաս»՝ 14 (Վանաձոր՝ 10, Տաշիր՝ 4), «Լիարժեք կյանք»՝ 20)
- **«Սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում՝ Սոցիալական համալիրների (սոցիալական ծառայություն, զբաղվածության և կենսաթոշակային տարածքային կենտրոններ, ԲՄՓՀ) կառուցում» ծրագրի** իրականացումը ներկայումս ընթանում է պետական մակարդակով՝ առաջնահերթ աշխատանքներ են տարվում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մեկտեղման (նույն տարածքում) կամ ինտեգրման ուղղությամբ: **Դեռևս հարմար տարածքներ չեն գտնվել Ստեփանավան, Սպիտակ քաղաքներում** (Սպիտակի քաղաքապետարանում, որտեղ տեղակայված են զբաղվածության, ԲԿԱԳ-ի և ռեգիստրի տարածքային մարմինները, առաջիկայում ազատվելու են կադաստրի ծառայության երկու աշխատանքային սենյակները, որոնք Սպիտակ համայնքի

ղեկավարը պատրաստակամություն է հայտնել տրամադրելու սոցիալական ծառայություններին):

Ալավերդիում առաջարկվում է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշմամբ /N 5 հավելված/ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող «Ալավերդու ծննդատուն» ՊՓԲԸ-ի եռահարկ մասնաշենքի տարածքը (2099.4 քառ. մ մակերեսով), որն 2012թ. ընթացքում ամբողջովին կազատվի (ներկայումս «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ընթանում են վերանորոգման և վերապրոֆիլման աշխատանքներ):

Տաշիրի տարածաշրջանային կենտրոնում՝ Տաշիր քաղաքում առաջարկվում է Տաշիր համայնքին պատկանող նախկին շրջխորհրդի գործկոմի շենքը (գտնվում է քաղաքապետարանի հարևանությամբ՝ Լենինի թիվ 96 հասցեում) վերակառուցել որպես համալիր կենտրոն (տարածքը լիովին բավարար է բոլոր ծառայությունների տեղակայման համար), որի առաջին հարկում կտեղակայվի նաև միասնական ընդունարանը: Առաջարկվող տարածքի համար առկա են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր և ՀՀ 2008թ. պետական բյուջեով ֆինանսական միջոցներ էր հատկացվել շենքը վերակառուցելու համար, սակայն տնտեսական ճգնաժամի պատճառով հնարավոր չի եղել իրականացնել:

Իսկ Գուգարքի տարածաշրջանային կենտրոն հանդիսացող Վանաձոր քաղաքի Գ.Նժդեհի փող. թիվ 14 հասցեում 2005թ.-ից գործում է Սոցիալական համալիր կենտրոնը (որպես հանրապետությունում փորձնական առաջին ծրագրի արդյունք):

- **Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական, ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և համացանցային կապով ապահովում.** Մարզապետարանի աշխատակազմի թվով 4 սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններին (Սպիտակ, Ստեփանավան, Թումանյան, Տաշիր) տրամադրվել են 2-ական նոր համակարգիչներ: Իսկ կայուն համացանցային կապ ստեղծելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կատարել է կարիքների գնահատում:
- **Լոռու մարզում տարեցների և հաշմանդամների վիճակի բարելավում ծրագրի շրջանակներում.** «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Վանաձորում իրականացվող «Տնային խնամք միայնակ տարեցներին» ծրագրին աջակցությունը ընթացել է ընտանեկան նպաստ համակարգում չընդգրկված հրատապ օգնության տրամադրման (սոցիալական աջակցության խորհուրդների) միջոցով: Շահառուների ցուցակները յուրաքանչյուր եռամսյակ տրամադրվում է «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի Վանաձորի գրասենյակի կողմից:
 - ✓ ՀԿ-ներում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը 9, որից՝ «Լիարժեք կյանք» ԲՀԿ՝ 4, «Հայկական Կարիտաս»՝ 3, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ՝ 2:
 - ✓ Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում՝ մարդասիրական ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը՝ 441 («Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի միջոցներով՝ Վանաձոր՝ 153, Ալավերդի՝ 118, Սպիտակ՝ 106, Տաշիր՝ 64)
 - ✓ Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում (բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող) ծերերի թիվը՝ 160 («Հայկական Կարիտասը» Վանաձորում և Տաշիրում սպասարկում է համապատասխանաբար 100 և 60) տարեցներ:

- **Հաշմանդամություն ունեցող անձանց** (հատկապես՝ հաշմանդամ երեխաների և նրանց ծնողների) ապահովում վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով՝ Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամություն ունեցողների թիվը՝ 200 (31 սայլակ, 13 օրթեգ, 27 այլ պարագաներ (օրթոպեդիկ կոշիկ, գուլպա), 17 ձեռնափայտ, 18 հենակ, 10 քայլակ, 66 լսողական սարք (որից՝ 48-ը՝ Վանաձորի ՄԾՏԳ), պրոթեզավորում՝ 18 անձ, որից՝ 10 կրծքի):
- **«Ստեփանավանի հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման համայնքային կենտրոն»-ի զարգացում.** Հաշմանդամություն ունեցող երեխաների առողջավերականգնողական ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվել են 60 երեխաներ, որից՝ 15 հաշմանդամություն ունեցող:
- Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում. Հաշվառված խնամատար ընտանիքների թիվը՝ 8, խնամատար ընտանիքներում տեղավորված ծնողազուրկ երեխաների թիվը՝ 9,
- **Աջակցություն զբաղվածության քաղաքականությանը.** Զբաղվածության բնագավառում ՀՀ կառավարությունը շարունակել է իր քաղաքականությունը և պետական ծրագրերի մասով հատկացումները:
 - ✓ Վերապատրաստված գործազուրկների թիվը՝ 206 (Վանաձոր՝ 99, Ալավերդի՝ 33, որից 5՝ ՄԱԿ-ի ծրագրով, Սպիտակ՝ 28, Ստեփանավան՝ 29, որից 15՝ ՄԱԿ-ի ծրագրով, Տաշիր՝ 17)
 - ✓ Աշխատանքի տեղավորված վերապատրաստված 243 գործազուրկներից աշխատանքի են տեղավորվել թիվը՝ 122, (Վանաձոր՝ 76, Ալավերդի՝ 15, Սպիտակ՝ 8, Ստեփանավան՝ 8, Տաշիր՝ 15) որից՝ 7 հաշմանդամություն ունեցող
 - ✓ Վարձատրվող հասարակական աշխատանքների 9 ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը՝ 90 (Գուգարքի տ/շրջան՝ 2 ծրագիր՝ 18 մարդ, Թումանյանի տ/շրջան՝ 3 ծրագիր՝ 38 մարդ, Սպիտակի տ/շրջան՝ 2 ծրագիր՝ 16 մարդ, Ստեփանավանի տ/շրջան՝ 1 ծրագիր՝ 10 մարդ, Տաշիրի տ/շրջան՝ 1 ծրագիր՝ 8 մարդ):

Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը.

- **Փախստականների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր**
ՀՀ նախագահի հանձնարարականով ՀՀ կառավարության 03.02.2011թ. թիվ 108-Ն որոշմամբ 25 մլն դրամ է հատկացվել Լոռու մարզի Ղուրսալի համայնքում փախստական ընտանիքների համար տների գնման նպատակով, 2011թ. 21,6 մլն դրամով թվով 6 ընտանիքների համար գնվել են առանձնատներ: Ղուրսալի համայնքի ղեկավարի առաջարկով մնացորդային 3.4 մլն դրամով բնակարանային ապահովում կունենա նաև 7-րդ ընտանիքը:
- **Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագիր** ՀՀ ՊՆ աշխատախումբը հունիս ամսին կատարել է տնայցեր՝ Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջանների անօթևան շահառուների ընտանիքներ: ՀՀ կառավարության 23.06.2011թ. թիվ 944-Ն որոշմամբ հաշմանդամ 7 զինծառայողի ընտանիքներ 3 սենյականոց բնակարանային ապահովում են ստացել՝ Սպիտակում 4 ընտանիք (բնակարանները արդեն տրամադրվել են) և Ստեփանավանում 3 ընտանիք (բնակարանները դեռևս չեն տրամադրվել):
- **ՄԶԾ առաջարկված փարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների** լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցման (մեր կողմից ճշտվել են կառուցման վայրերը և քաղաքային համայնքները պատրաստ են իրենց մասով

ներդրումներ կատարել), բնակչությանը սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ու սոցիալապես խոցելի խմբերի կարիքների գնահատմանն ուղղված միջոցառումների իրագործման համար: Առաջարկված ծրագրով ֆինանսավորում չի կատարվել: Այսօր առկա է հետևյալ պատկերը՝ քաղաքային համայնքների մշակութային և սպորտային 67 կենտրոններում (որից՝ սպորտային՝ 17 և մշակութային՝ 50) կառուցվել է ընդամենը 4 թեքահարթակ:

- **ՄԶԾ 2011թ. մեկնարկվելիք ծրագրերի կատարման համար** (Սպիտակում տարեցների կենտրոնի հիմնում, Ալավերդի քաղաքում՝ տարեցների ցերեկային կենտրոնի ստեղծում, Վանաձորում՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական և պրոթեզաօրթոպեդիկ պարագաների վերանորոգման մարզային ծառայության ստեղծում) համայնքները պատրաստակամ են:

2011թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը շարունակում է իր քաղաքականությունը վարձատրվող հասարակական աշխատանքների ծավալի ընդլայնման ուղղությամբ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011թ. հունվարի 25-ի թիվ 2-Ա/1 հրամանի և «2011թ. հունվարի 25-ի թիվ 2-Ա/1 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» 2011թ. մայիսի 24-ի թիվ 43-Ա/1 հրամանների համաձայն Պետական բյուջեից «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում Լոռու մարզին հատկացվել է 14,127.4 հազար դրամ, որի դիմաց առաջին կիսամյակում մարզի համայնքներում կատարվել են սոցիալական իրավիճակի բարելավման 14.127 մլն ընդհանուր ծավալով 9 ծրագիր:

Հավելված 1-ում բերված է 2011թ. «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում Լոռու մարզում իրականացված աշխատանքները:

Որպես ոլորտային նպատակ ընտրված էր՝ Լոռու մարզում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այս ուղղությամբ նպատակադրված զգալի աշխատանքներ են կատարվել:

Անապահովության գնահատման համակարգում 01.01.2012թ. դրությամբ ի համեմատություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նպաստառու ընտանիքների միջին թիվը կազմել է ամսական միջինը 16.408 (նախկինում՝ 18,401):

01.01.2012թ. դրությամբ Լոռու մարզում կենսաթոշակ են ստանում 51,062 մարդ (2010թ. նույն ժամանակաշրջանում՝ 51,757, նվազումը՝ 13.4 տոկոս), հաշմանդամ են 16,533-ը, որից՝ առաջին խումբ՝ 973, երկրորդ խումբ՝ 8,868, երրորդ խումբ՝ 5,973, մանկուց հաշմանդամություն ունեն 719 երեխա, ծնողազուրկ են 2,836 երեխա, որից՝ 56 երկկողմանի:

01.01.2012թ. դրությամբ աշխատանք փնտրողներ են 11,377 քաղաքացի (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 12,216, նվազումը՝ 6.9 տոկոս), չզբաղված աշխատանք փնտրողներ են 10,330 (նախկինում՝ 10,808, նվազումը՝ 4.4 տոկոս), գործազուրկներ են 10,167 (նախկինում՝ 10,641, նվազումը՝ 4.5 տոկոս): Մարզում գործազրկության մակարդակը կազմում է 9.4 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազումը կազմում է 0.4 տոկոս (նախկինում՝ 9.8 տոկոս), որը պայմանավորված է չներկայանալու պատճառով հաշվառումից հանելու հանգամանքով: 2011թ. ընթացքում մարզում աշխատանքի են տեղավորվել 953 աշխատանք փնտրողներ, որոնցից 598-ը՝ կին (2010թ. այդ ցուցանիշը՝ 1145 էր, որոնցից 672-ը՝ կին):

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Գյուղատնտեսություն

Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտը ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արտադրողականության բարձրացումը ՄԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսական հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, գյուղատնտեսական ասոցիացիաների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն:

Լոռու մարզի զարգացման ծրագրում առաջնային թիրախներ են.

- ✓ սերմնաբուծական տնտեսությունների հիմնումը հացահատիկային, միամյա ու բազմամյա խոտաբույսերի սերմարտադրության համար
- ✓ կարտոֆիլի վիրուսազերծ պալարիկների արտադրությունը երկրագործության ինստիտուտի Ստեփանավանի տարածքային կայանի հիման վրա
- ✓ բանջարեղենի պահպանման սառնարանային տնտեսությունների հիմնում
- ✓ կարտոֆիլի, բանջարեղենի և պտղի վերամշակման արտադրամասերի հիմնում
- ✓ կաթի սառեցման և վերամշակման արտադրամասերի հիմնում:

Կարևորվում է նաև գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: Այն ներառում է սառնարանային և վերամշակող տնտեսությունների, փոքր սպանդանոցների, կաթի ընդունման և վերամշակման կետերի հիմնում, համայնքի ոռոգման համակարգերի վերականգնում և այլն: Սրանց մի մասը նախատեսվում է ֆինանսավորվել պետական բյուջեի կողմից, իսկ մյուս մասը պետք է լինի մասնավոր նախաձեռնությունների արդյունք:

Մարզի գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտներում 2011թ. բոլոր ֆինանսական աղբյուրներով նախատեսված 721.24 մլն դրամի դիմաց (18.00 մլն դրամը՝ հրատապ ծրագրով) իրականացվել է 562.30 մլն դրամի աշխատանքներ, որից ոռոգման համակարգերի վերականգնման համար նախատեսված 123.173 մլն դրամի դիմաց 89.178 մլն դրամի, այդ թվում պետ. բյուջեով նախատեսված 18.00 մլն դրամի (հրատապ ծրագրով) դիմաց կատարվել է 16.00 մլն դրամի աշխատանքներ: Ընդ որում Ալավերդու աղբավայրի կառուցման աշխատանքները և «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրով մարզի 6 համայնքների արոտների կառավարման ծրագրերը կշարունակվեն նաև 2012-2015 թվականներին:

Գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտներում 2011 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2011թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2011թ ընթացքում	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	721.24	562.30	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	18.00	16.00	
1.	Արևաշող գյուղում ոռոգման ջրավազանի հիմնանորոգում	18.00	16.00	Հրատապ ծրագրով
II	ԱՅԼ	703.24	546.30	
1.	Դսեղ և Օծուն գյուղական համայնքներում հակակարկտային կայանքների տեղադրում	0.00	5.00	Համայնքի բյուջե
2.	Ալգեհատ համայնքի 1712մ երկարությամբ,	15.78	15.78	Համայնքի բյուջե

	Օձունի 279մ երկարությամբ և Ճոճկանի 3564,4մ երկարությամբ ոռոգման 3-րդ կարգի ջրանցքների հիմնանորոգման 15% համաֆինանսավորում			
3.	Ալավերդի քաղաքի աղբավայրի կառուցում	38.6	38.6	Համայնքի բյուջե
4.	Այգեհատ համայնքի 1712մ երկարությամբ, Օձունի 279մ երկարությամբ և Ճոճկանի 3564,4մ երկարությամբ ոռոգման 3-րդ կարգի ջրանցքների հիմնանորոգման 85% համաֆինանսավորում	89.42	89.42	«ՀՄՀ Հայաստան» հիմնադրամ
5.	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրով Լորուտ համայնքի արոտներում անասունների ջրամատակարարման հետ կապված աշխատանքներ	181.44	30.00	USID
6.	Գոգարան համայնքում գործող «Չարթոնք» կոոպերատիվին տրակտորի (իր գյուղատնտեսական գործիքներով) և ապրանքային վարկի ձևով սերմացուի ու պարարտանյութի տրամադրում	0.00	7.50	Շվեցարական «Կազա» հիմնադրամ
7.	Ալավերդու պղնձաձուլական գործարանի նոր ծխատարի կառուցում	378.00	360.00	«Էյ-Սի-Փի» ՓԲԸ

2011թ Լոռու մարզում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Ավստրիական կառավարության ֆինանսավորմամբ իրականացվում է «Վրաստանի և Հայաստանի սահմանամերձ գոտիներում աղքատության նվազեցում և վստահության ձևավորում գյուղական համայնքների կայուն զարգացման գործում քաղաքացիական հասարակության կառույցների դերն ամրապնդելու միջոցով» STAGE-II ծրագիրը: Ծրագրի նպատակն է ամրապնդել հայ-վրացական սահմանամերձ համայնքների բնակիչների բարեկամությունը, աջակցել համայնքներում գյուղատնտեսության զարգացմանը:
- Շվեցարական «Կազա» հիմնադրամի աջակցությամբ Գոգարան համայնքում գործող «Չարթոնք» կոոպերատիվին տրամադրվել է տրակտոր իր գյուղատնտեսական գործիքներով և ապրանքային վարկի ձևով սերմացուներ ու պարարտանյութ (շուրջ 7,5մլն դրամ):
- ՀՀ կառավարության կողմից 2011թ. մարզին հատկացվել է գարնանացան գարու 160տ էլիտային, 30տ գարու առաջին վերարտադրության և 11տ եգիպտացորենի հիբրիդային սերմացուներ: 160տ գարնանացան գարու էլիտային սերմացուն հատկացվել է մարզի 44 համայնքներին, 30տ գարու առաջին վերարտադրության սերմացուն 13 համայնքներին և 11տ եգիպտացորենի հիբրիդային սերմացուն 26 համայնքներին գյուղացիական տնտեսություններին: 2011թ. աշնանացանի համար ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել է ՌԴ-ից ներկրված 63,1տ աշնանացան ցորենի էլիտային սերմացու, որը տրամադրվել է 15 ֆերմերային տնտեսությունների և 291տ աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որը տրամադրվել է 47 համայնքների գյուղացիական տնտեսություններին: Հատկացված սերմացուների ցանքն ավարտվել է: ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել մարզում գյուղատնտեսական

տեխնիկայի ու գործիքների և ազոտական պարարտանյութի պահանջարկների մասին տեղեկատվություններ:

- Լոռու մարզային փրկարարական վարչության մասնագետների հետ համատեղ ուսումնասիրվել է տարերային աղետներից առավել տուժած համայնքների ցանքերի վիճակը, կազմվել է մասնագիտական ակտ պատճառված վնասների չափի վերաբերյալ և ներկայացվել մարզպետի հաստատմանը:
- Լոռու մարզային վիճակագրական գործակալության հետ ամփոփվել է զարնանացանի և աշնանացանի տվյալները և սահմանված կարգով ներկայացվել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:
- ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին հատկացված 2420կգ ցինկի ֆոսֆիդը ներ է կրվել մարզ և բաշխվել մարզի 46 համայնքների:
- «ՀՄՀ-Հայաստան» հիմնադրամի կողմից և համայնքների կողմից 15% համաֆինանսավորման սկզբունքով 2011թ. ավարտվել են մարզի Այգեհատ համայնքի 1712մ երկարությամբ, Օձուն համայնքի 279մ երկարությամբ և Ճոճկանի 3564,4մ երկարությամբ ոռոգման 3-րդ կարգի ջրանցքների վերակառուցման շինմոնտաժային աշխատանքները: Շինմոնտաժային աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 105.22 մլն դրամ, որից համայնքների ներդրումը 15.8 մլն դրամ է:
- 2011թ. պետական բյուջեից (իրատապ ծրագրի շրջանակներում) Արևաշող համայնքի ոռոգման ջրավազանի հիմնանորոգման նպատակով հատկացվել է 18. 0 մլն դրամ, որից իրականացվել է 16.0 մլն դրամի աշխատանքներ:
- Լոռու մարզում 2011-2015թթ. իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցակցության» ծրագրի շրջանակներում, 2011թ-ի Լոռու համայնքի արոտներում իրականացվել է անասունների ջրամատակարարման հետ կապված աշխատանքներ: Նախագծահաշվարկային աշխատանքներ են կատարվել Ահնիձոր, Աթան, Շամուտ, Դսեղ և Լեջան համայնքների արոտների ջրարբիացումն ու ճանապարհների վերանորոգումն իրականացնելու համար:
- Լոռու մարզի փրկարարական ծառայության աշխատակիցների հետ համատեղ Եղեգնուտ, Արջուտ, Լեռնապատ, Հալավար, Բազում, Անտառամուտ, Գուգարք, Շահումյան, Լերմոնտովո, Մարգահովիտ, Ազնվագոր, Ֆիոլետովո, համայնքներում մայիսի 13-ից մինչև 31-ը իրականացվել է ուսումնավարժություն «Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով:
- Կազմակերպվել և մասնակցություն է ցուցաբերվել մարզի համայնքներում հունվար ամսվա ընթացքում իրականացված անասնազվխաքանակի հաշվառման աշխատանքներին: Մարզում 2011թ-ի մարտի 4-ից մինչև ապրիլի 30-ը ընկած ժամանակահատվածում անասնազվխաքանակի ընտրանքային հաշվառում է իրականացվել՝ Լոռի Բերդ, Ուրասար, Հալավար, Նոր Խաչակապ. Սարամեջ, Ծաղկաբեր, Շենավան, Կուրթան, Ամրակից համայնքներում:
- Այցելություններ և ուսումնասիրություններ է իրականացվել մարզի կաթի վերամշակման արտադրամասեր: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ կաթի 1կգ-ի մթերման միջին գինը 2011թ-ի մայիս-հունիս ամիսներին կազմել է 150 դրամ, իսկ 1կգ պանրի գործարանային գինը՝ 1900 դրամ:
- Սննդամթերքի անվտանգության ծառայության, ԳԱՄԿ-ի և համայնքների անասնաբույժների հետ կազմակերպվել և իրականացվել է սեմինար խորհրդակցություններ անասնաբույժների մասնագիտական գիտելիքների վերապատրաստման նպատակով:

- Հանդիպումներ է իրականացվել մարզի ազգաբնակչության հետ համայնքներում տոհմային տնտեսություններ և գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման կայաններ ստեղծելու ուղղությամբ:
- 2011թ. պետ. պտվերով նախատեսված հակաանասնահամաճարակային միջոցառումներն իրականացվել է ըստ ժամանակացույցի:
- Մարզի կաթնամթերքի և ձկնաբուծության արտադրության զարգացման նպատակով կազմակերպվել և աջակցվել է «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամի կողմից Լոռու մարզպետարանում կայացած սեմինար պարապմունքի անցկացմանը:
- ՀՀ տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակում կազմակերպվել է մարզում 2012թ-ին նախատեսված խոշոր եղջերավոր կենդանիների՝ հոլշտին, սիմենտալ և շվից ցեղերի տոհմային երինջների պահանջների հաշվառման աշխատանքները: Արդյունքների մասին տեղեկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

3.2. Բնապահպանություն

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու նպատակով 2011թ. աշխատանքներ են տարվել հետևյալ ոլորտներում՝

- 2011թ. ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի կողմից Բնության Համաշխարհային Հիմնադրամի հետ համատեղ «Կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմացումը Հարավային Կովկասում անտառների պահպանության, կառավարման և վերականգնման միջոցով» ծրագրի շրջանակներում.
 - Կաթնաջուր, Սպիտակ և Ֆիոլետովո համայնքներում իրականացվել է 34.6 հա անտառտնկման աշխատանքներ,
 - անտառպատված տարածքների ցանկապատում – 3.9 կմ,
 - նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամք 281 հա տարածքի վրա,
 - նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացման աշխատանքներ են իրականացվել Ջրաշեն և Ծաղկաբեր համայնքներում 235.2 հա, որոնք կշարունակվեն նաև 2012թ. գարնանը:
- Լոռու մարզում գտնվող «Կանաչագարդ երկիր» ՀԿ-ի և «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի տնկարաններում աճեցվում են տարբեր տեսակի անտառային և դեկորատիվ ծառաթփատեսակներ (տուա, կաղնի, սոճի, թխկի, հացենի, հաճարենի եւ այլն): Տվյալ կազմակերպությունները, համագործակցելով Լոռու մարզպետարանի հետ, իրենց դիմած համայնքներին, դպրոցներին, ՀԿ-ներին, կազմակերպություններին տրամադրում են տնկանյութ, պայմանով, որ տրամադրված տնկանյութը առաջիկա հինգ տարիների ընթացքում կլինի նրանց ուշադրության և խնամքի տակ:
- Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված, ըստ հաստատված բնապահպանական ծրագրի, «Թեղուտ» ՓԲԸ-ն պարտավորվել է կատարել 714 հա անտառտնկման աշխատանքներ, որից 2009-10թթ. ընթացքում մասնագիտացված ձեռնարկությունների միջոցով արդեն իսկ կատարել է 133 հա անտառպատում: Մարզպետարանի կողմից ներկայացված տարածքներում «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է տեղանքի ուսումնասիրության աշխատանքներ և 2011թ-ին ընտրվել են Արջուտ և Օձուն համայնքները՝ համապատասխանաբար 25 և 30 հա տարածքներով, որից առայժմ անտառպատման աշխատանքներ են իրականացվել միայն Օձուն համայնքի տարածքում՝ 8 հա: Ծրագիրը կշարունակվի 2012թ. գարնանը:
- 2011թ. ընթացքում մարզի անտառտնտեսություններում իրականացվել է.
 - պետ.բյուջեով
 - նախորդ տարիների ընթացքում հիմնադրված

- անտառմշակույթների լրացում - 107 հա; նախորդ տարիների ընթացքում հիմնադրված անտառմշակույթների խնամք - 96.5 հա;
- WWF ծրագրով.
 - նախորդ տարիների ընթացքում հիմնադրված անտառմշակույթների լրացում - 140 հա;
 - նախորդ տարիների ընթացքում հիմնադրված անտառմշակույթների խնամք - 8.5 հա:
- Գործող օրենքի համաձայն Ալավերդու պղնձաձուլական գործարանի եւ Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատի կողմից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին պետ.բյուջեից կատարվում են մասնահանումներ՝ բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար:

Ստորև բերվում է ՀՀ պետ.բյուջեի կողմից 2009-2011թթ. բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար տրամադրված գումարների վերաբերյալ տեղեկատվություն.

Համայնքներ	հազ. դրամ		
	Տարիները		
	2009	2010	2011
Ալավերդի	103564.2	37292.2	55155.9
Հաղպատ	9197.3	9197.3	18600.0
Օձուն	8992.8	9006.0	18600.0
Աքրի	18470.5	18994.2	11712.0
Հագվի			8000.0
Ախթալա		25 0.0	1000.0
Ընդամենը	140224.8	77029.7	113067.9

- Ալավերդու պղնձաձուլական գործարանի մթնոլորտային արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ Արմենիան Քափր Փրոգրամ՝ ՓԲԸ շահագործման է հանձնել նոր ծխատար, որը 218 մետրով բարձր է նախկին գործող ծխնելույզից: Արդյունքում բարձրացել է արտանետվող գազերի ցրման արդյունավետությունը, որի հետևանքով նվազել են արտանետվող գազերի ազդեցությունը: Ծխատարի կառուցման աշխատանքները տևել են մոտ 2 տարի, որի վրա ծախսվել է շուրջ 1 մլն դոլար:
- Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ Լոռու մարզպետարանի նիստերի դահլիճում կազմակերպվել և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի, մերձակա համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ անց է կացվել հրամանատարական շտաբային ուսումնավարություն՝ «Անտառների հրդեհների հրդեհաշիջում և հետևանքների վերացում» թեմայով: Այնուհետև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի Շահումյանի անտառպետությունում պրակտիկորեն իրականացվել են հրդեհաշիջման աշխատանքներ:
- 2011թ. ընթացքում Ոստիկանության Լոռու մարզային վարչության և ոստիկանության բաժինների կողմից կատարվել է 381 ստուգայց, հայտնաբերվել են ապօրինի անտառտահումների, փայտանյութի տեղափոխման և իրացման 70 դեպք, պետությանը հասցված վնասի չափը կազմել է 24 մլն. 915 հազ. դրամ, որից վերականգնվել է 11 մլն. 275 հազ. դրամ: Հարուցվել է 9 քր. գործ: Վարչական պատասխանատվության են ենթարկվել 31-ը:

- 2011թ. մարզի հատատեղային ֆոնդը կազմում է 9168մ³, 11 ամիսների ընթացքում օրինական (պլանային) հատումները կազմել են 10571.7մ³, այդ թվում Թեղուտի հանքավայրի շահագործման նպատակով 2011թ. 11 ամիսների ընթացքում մթերվել է 4436մ³:
 - 2011թ. 11 ամիսների ընթացքում մարզում մթերվել է 1450մ³ թափուկ վառելիքայտ
 - Պարբերաբար այցելություններ են կատարվել Թեղուտի և Արմանիսի հանքավայրեր և տեղում ուսումնասիրվել կատարվող աշխատանքների ընթացքը:
 - Մարզի ընդերքի օգտագործման և օրինակության վերաբերյալ համապատասխան գերատեսչություններին պարբերաբար ներկայացվել են տեղեկատվություններ:
 - Մարզի բնապահպանական կարևոր խնդիրների քննարկումները, հասարակական լուսմները հիմնականում անց են կացվում մարզպետարանի նիստերի դահլիճում և մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրիուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Հասարակական լուսմներին մասնակցում են, ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների և հասարակության ակտիվ ներկայացուցիչներ: 2011թ. ընթացքում Վանաձորի, Ալավերդու և Ստեփանավանի Օրիուս կենտրոններում անց են կացվել տարաբնույթ 258 բնապահպանական միջոցառումներ, որոնց ընդհանուր մասնակցել են 3893 մարդ:
 - «Թափոնների կառավարում-ԵՀԳԳ՝ Արևելք» ծրագրի շրջանակներում Լոռու մարզում իրականացվել է թափոնակուտակումների վերաբերյալ տվյալների հավաքագրում, գույքագրում, քարտեզագրում, որի հիման վրա մշակվելու է թափոնների կառավարման 15 տարվա ռազմավարություն, որի նպատակն է՝ ամբողջ մարզի տարածքում ստեղծել 2-3 եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայրեր, իսկ մարզի տարածքում կգործեն թափոնների բեռնաթափման միջանկյալ կետեր, որոնցում կուտակված աղբը պարբերաբար մեծ մեքենաներով կտեղափոխվեն մեծ աղբավայրեր: Մարզում այժմ գործող այն աղբավայրերը, որոնք չեն հանդիսանա թափոնների բեռնաթափման միջանկյալ կետեր, կլիկվիդացվեն կամ կոեկուլտիվացվեն ու կկանաչապատվեն:
- Իրականացված աշխատանքների արդյունքում ստեղծվել է տվյալների էլեկտրոնային բազա, որի հիման վրա միջազգային փորձագետների կողմից մշակվել է մարզի թափոնների կառավարման ռազմավարության նախագիծ: Նախագիծը իր մեջ ներառում է.
- ✓ թափոնների կառավարման ռազմավարության հիմնական տվյալները (ապրիլ 2011թ.) – 76 էջ,
 - ✓ թափոնների կառավարման տարբերակների մշակում ՀՀ Լոռու մարզի համար (հոկտեմբեր 2011թ.) – 97 էջ,
 - ✓ ՀՀ Լոռու մարզում թափոնների կառավարման ռազմավարության իրականացմանն ուղղված ֆինանսական առաջարկություններ (նոյեմբեր 2011թ.) – 64 էջ,
 - ✓ ՀՀ Լոռու մարզում թափոնների կառավարման կազմակերպման ինստիտուցիոնալ խնդիրները (նոյեմբեր 2011թ.) – 41 էջ:
- Նոյեմբերին ներկայացված նախագիծերը ներկայումս գտնվում են քննարկման փուլում: Ծրագիրն ընթացքի մեջ է:

4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2011թ. մարզի քաղաքաշինության ոլորտում ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին նախատեսված **8,272.46** մլն դրամի դիմաց (պետ բյուջեից՝ **8,145.00** մլն դրամ, որից **505.00** մլն դրամը հրատապ ծրագրով) կապիտալ շինարարության ծրագրից 2011 թվականի ընթացքում իրականացվել է **10,256.21 մլն** դրամի աշխատանքներ (պետ բյուջեից՝ **8,128.75** մլն դրամ, որից **488.75** մլն դրամը հրատապ ծրագրով), այդ թվում ըստ ֆինանսավորման աղբյուրների և ոլորտների.

4.1 2011թ. ՀՀ պետական բյուջեով Լոռու մարզում ըստ ոլորտների նախատեսված է իրականացնել հետևյալ շինարարական աշխատանքները՝

- **Բնակարանաշինության ոլորտում**

Երկրաշարժից տուժած բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն, Վանաձորի, Ալավերդու, Ախթալայի, Թումանյանի, Շամլուղի, Ստեփանավանի, Տաշիրի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում, Վանաձորի բազմաբնակարան բարձրահարկ շենքերի վերելակների հիմնանորոգում, Ղուրսալի համայնքի փախստական ընտանիքների համար բնակարանների գնում,

- **Կրթական համակարգի օբյեկտների նորոգում**

Վանաձորի թթ. 17, 24, 13 դպրոցների հիմնանորոգում, Վանաձորի թիվ 22 դպրոցի մարզադահլիճի կառուցում, Ստեփանավանի թիվ 6 դպրոցի մարզադահլիճի կառուցում, Սպիտակի թիվ 1 դպրոցի մարզադահլիճի կառուցում, ք. Թումանյանի դպրոցի մարզադահլիճի հատակների նորոգում, Դսեղի դպրոցի շենքի հիմնանորոգում, Ալավերդու արհեստագործական ուսումնարանի հիմնանորոգում, «Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում, Ղուրսալի դպրոցի ջեռուցում, Սարահարթ դպրոցի ջեռուցում, Թեղուտի դպրոցի հիմնանորոգում:

- **Մշակութային օբյեկտների կառուցման և նորոգման ոլորտում**

Գյուլագարակի մշակույթի (համայնքային կենտրոնի) տան կառուցում, Արևաշողի համայնքային կենտրոնի կառուցում, Խնկոյանի մշակույթի (համայնքային կենտրոնի) տան հիմնանորոգում, Ծաթերի մշակույթի տան տանիքի վերանորոգում, Վանաձորի երկրագիտական թանգարանի վերանորոգում, ք. Վանաձորի Արվեստի քոլեջի վերանորոգում, Վանաձորի Հովի. Աբելյանի անվան Պետական դրամատիկական թատրոնի հիմնանորոգում, Օձունի վանքի վերանորոգում և վերականգնում, Քոբայրավանքի վերականգնում, Խնկոյանի մշակույթի տան հիմնանորոգում:

- **Առողջապահական ոլորտի օբյեկտների նորոգում**

Ալավերդու հիվանդանոցի հիմնանորոգում (2-րդ փուլ), Վանաձորի թիվ 2 հիվանդանոցի հիմնանորոգում, «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի շենքի կառուցում

Քաղաքաշինության ոլորտում 2011 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Շինարարական աշխատանքների անվանումը ըստ պատասխանատուների	2011թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2011թ ընթացքում (մլն դրամ)	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	8,272.46	10,256.21	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	8,145.00	8,128.75	
I	ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	7,650.43	7,662.93	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	7,640.00	7,652.50	
	ՀՀ «ԳԼԵՆԴԵԼ ՀԻԼՁ» ՓԲԸ	7,640.00	7,640.00	
1.	Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն	7,640.00	7,640.00	
2.	Սարամեջ գյուղում տանիքի կառուցում	0.00	2.50	Հրատապ ծրագրով
3.	Վանաձորում 2 տան գնում	0.00	10.00	Հրատապ ծրագրով
	ԱՅԼ	10.43	10.43	
1	Տարոն-2 ԲՇՀ 7 թիվ 36 եւ 37 անավարտ շենքերի շինարարություն	9.88	9.88	Համայնքի բյուջե
2	Տարոն-3 ԲՇՀ 7 թաղամասում անօթևան ընտանիքների համար բնակարանների կառուցում	0.55	0.55	Համայնքի բյուջե
II	ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ (ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ)	622.03	2,593.28	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	505.00	476.25	
	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	505.00	476.25	
1.	Նեղոցի գյուղապետարանի շենքի կառուցում	30.00	28.87	Հրատապ ծրագրով
2.	Օծունի գյուղապետարանի շենքի տանիքի հիմնանորոգում	10.00	9.30	Հրատապ ծրագրով
3.	ք. Թումանյանի 13-րդ փողոցի թիվ 8 բազմաբնակարան շենքի հիմնանորոգում	6.00	5.84	Հրատապ ծրագրով
4.	ք. Վանաձորի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	130.00	121.77	Հրատապ ծրագրով
5.	ք. Վանաձորի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում	30.00	29.00	Հրատապ ծրագրով
6.	ք. Սպիտակի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	22.00	19.5	Հրատապ ծրագրով
7.	ք. Ստեփանավանի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	25.00	21.80	Հրատապ ծրագրով
8.	ք. Ալավերդու բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների հիմնանորոգում	13.42	11.20	Հրատապ ծրագրով
9.	ք. Ալավերդու բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերափոխում քառալանջի	44.10	39.62	Հրատապ ծրագրով

10.	ք. Ախթալաի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	35.00	31.80	Հրատապ ծրագրով
11.	ք. Տաշիրի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	30.00	27.21	Հրատապ ծրագրով
12.	ք. Թումանյանի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	6.00	5.84	Հրատապ ծրագրով
13.	ք. Շամլուղի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում	18.00	17.48	Հրատապ ծրագրով
14.	ք. Ալավերդու բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում	10.28	10.00	Հրատապ ծրագրով
15.	ք. Վանաձորի բակերի բարեկարգում	40.00	37.12	Հրատապ ծրագրով
16.	ք. Ալավերդու բակերի բարեկարգում	4.20	3.90	Հրատապ ծրագրով
17.	ք. Թումանյանի կենտրոնական փողոցի լուսավորության կառուցում	0.00	5.00	Հրատապ ծրագրով
18.	Նախագծային աշխատանքներ	51.00	51.00	Հրատապ ծրագրով
II	ԱՅԼ	117.03	2,117.03	
1.	Վանաձորի փողոցային լուսավորության վերականգնում	46.10	46.10	Համայնքի բյուջե
2.	Սպիտակի փողոցների լուսավորության ցանցի կառուցում	30.00	30.00	Համայնքի բյուջե
3.	Ալավերդու ավտոբուսային կանգառների նորոգում	3.20	3.20	Համայնքի բյուջե
4.	Ալավերդու փողոցների լուսավորության ցանցի նորոգում	6.73	6.73	Համայնքի բյուջե
5.	Տաշիրի բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում	21.00	21.00	Համայնքի բյուջե
6.	Տաշիրի փողոցների լուսավորության ցանցի նորոգում	5.50	5.50	Համայնքի բյուջե
7.	Գուգարքում նորոգման աշխատանքներ	4.50	4.50	Համայնքի բյուջե
8.	Անհատական շինարարություն	0.00	2,000.00	Մասնավոր ներդրումներ

2011 թվականին մարզումիրականացվել է 12,384.75 մլն դրամի շինարարական աշխատանքներ, որից ըստ ոլորտների՝

- բնակարանաշինություն՝ 7,662.93 մլն դրամ,
- կրթական օբյեկտներ՝ 1,986.94 մլն դրամ,
- մշակույթի և սպորտի օբյեկտներ՝ 354.52 մլն դրամ,
- առողջապահական օբյեկտներ՝ 125.85 մլն դրամ,
- այլ նշանակության օբյեկտներ՝ 2,522.05 մլն դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ

12,384.75 մլն դրամ

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

5.1. Ճանապարհաշինություն

Մարզի ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 932.9 կմ, այդ թվում՝ միջպետական ա/ճ - 218.9 կմ, հանրապետական ա/ճ - 490.9 կմ, մարզային ա/ճ - 223.1 կմ:

Մարզում կան

- կամուրջներ և կամրջային անցումներ – 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ – 5 հատ

2011թ. պետբյուջեի միջոցներից մարզի ճանապարհաշինության ոլորտին հատկացվել է 2,170.77 մլն դրամ, այդ թվում ըստ պատվիրատուների՝

- ✓ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն – 1,383.53 մլն դրամ,
- ✓ ՀՀ տարածքային կառավարման նախարարություն – 284.24 մլն դրամ,
- ✓ ՀՀ Լոռու մարզպետարան – 503.00 մլն դրամ:

2011թ. ֆինանսական բոլոր աղբյուրներից ճանապարհաշինության ոլորտում ներդրումներ են իրականացվել միայն ՀՀ պետբյուջեից, որի միջոցներից մարզի ճանապարհաշինության ոլորտին նախատեսված **2,170.77** մլն դրամի դիմաց (որից 435.00 մլն դրամը՝ հրատապ ծրագրով) 2011թ. ընթացքում իրականացվել է **1,804.30** մլն դրամի աշխատանքներ, որից **465.00** մլն դրամը՝ հրատապ ծրագրով:

ՀՀ 2011թ. պետական բյուջեից Լոռու մարզում ճանապարհաշինության գծով հատկացումները և իրականացված աշխատանքները

			մլն դրամ
Հ/Հ	Շինարարական աշխատանքների անվանումը ըստ պատասխանատուների	2011թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է 2011թ ընթացքում (մլն դրամ)
	Ընդամենը մարզում՝	2,170.77	1,804.30
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	2,170.77	1,804.30
	ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	1,383.53	1,028.60
	Մ-6- Վանաձոր- Ալավերդի- Վրաստանի սահման 34-րդ կմ-ում հենապատի կառուցում	175.00	104.2
	Հ-169 (Մ-3)-Ջրաշեն-Լեռնավան	248.0	247.7
	Հ-182 (Մ-3)-Պուշկինո	100.0	99.9
	Հ-184 Մ-3- Նորաշեն- Սարչապետ (կատարված է Մ-3- Նորաշենի հատվածը)	394.23	157.2
	Շիրակամուտ- Գեղասար – ճանապարհի կամուրջ	12.9	12.9
	Մ-3- Արջահովիտ երկու կամուրջ	56.4	56.4
	S-5-22, Հ-24 Սոճուտ հ/տ կամուրջ	60.00	33.3
	Հ-24 Գյուլագարակ- Թումանյան կայարան Մ-6 ա/ճան. 17-18 կմ-ի կմ-ի սողանքային հատվածի շրջանցում	250.00	230.0
	Հ-24 Գյուլագարակ-Թումանյան կայարան–Մ-6 ավտոճանապարհի Կուրթան-Ձորագետ հատվածի 10-րդ եւ 11-րդ կմ հենապատի կառուցման աշխատանքներ	21.5	21.5
	Հ-25, Մ-6 Հաղպատի պատմական հուշարձան, Ծաղկաշատ ա/ճ շեպերի ուղղման եւ քարաթափման աշխատանքներ	6.8	6.8
	Մ-6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշ. ա/ճ 43-րդ և 45-րդ կմ-ների հենապատերի փլվածքների վերականգնման աշխատանքներ	7.2	7.2

	Հ-180-Ալավերդի-Ջիլիզա-Վրաստանի սահման ա/ճ ստորին հենապատի եւ ջրահեռացման խողովակի վերանորոգման աշխատանքներ	6.3	6.3
	Մ-8-Վանաձոր-Դիլիջան միջպետական նշանակության ա/ճ կմ 34+015 ստորին հենապատի վերականգնման աշխատանքներ	7.1	7.1
	Հ-31, Մ-1-Վարդաղբյուր-Տաշիր-Մ-3 հանրապետական նշանակության ա/ճ կմ38+000-կմ42+000 հատվածի հողային պաստառի վերականգնման աշխատանքներ	7.2	7.2
	ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի կամրջի վերանորոգման աշխատանքներ	30.9	30.9
	ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	284.24	242.70
	<i>Հանրապետական նշանակության ա/ճան.</i>		
1	S-5-16 /Մ 6 / -Մարց-Աթան - Հ 22 - Քարինջ	180.5	180.5
2	(Մ 6 / - Մարց-Աթան) Ահնիձոր	21.1	21.1
3	(Մ 6 / - Մարց-Աթան) Լորուտ	12.8	12.8
4	(/Մ-6/-Մարց-Աթան) Քարինջ	28.3	28.3
5	/Հ 161/ Արևաշող-Սպիտակ	41.54	0.00
	ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ	503.00	533.00
1	Մարզային ենթակայության ա/ճանապարհների պահպանում և շահագործում	68.00	68.00
	ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	435.00	465.00
1.	ք.Վանաձորի Տիգրան Մեծ փողոցի մայթերի և փողոցների ասֆալտապատում	160.00	160.00
2.	ք.Սպիտակ փողոցների ասֆալտապատում	36.00	36.00
3.	ք.Ստեփանավանի փողոցների ասֆալտապատում	35.00	35.00
4.	ք.Ալավերդու փողոցների ասֆալտապատում	28.00	28.00
5.	ք.Տաշիրի փողոցների ասֆալտապատում	30.00	40.00
6.	ք.Թումանյանի փողոցների ասֆալտապատում	6.00	6.00
7.	գ. Օձունի փողոցների, նաև եկեղեցի տանող ճանապարհի ասֆալտապատում	20.00	40.00
8.	գ.Լեջանի գյուղամիջյան ճանապարհների նորոգում /խճով/	5.00	5.00
9.	գ.Լեռնանցքի դպրոցի ճանապարհի հիմնանորոգում	40.00	40.00
10.	գ. Լեռնահովիտի ճանապարհի հիմնանորոգում	10.00	0.00
11.	գ.Գուգարքի ներհամայնքային ճանապարհի հիմնանորոգում	50.00	50.00
12.	գ.Շիրակամուտի ճանապարհի վերանորոգում	15.00	15.00
13.	գ.Աքրու կենտրոնական ճանապարհի ասֆալտապատում	0.00	10.00

5.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Լոռու մարզի կարևոր հարստություններից են հանդիսանում խմելու համար պիտանի, բարձր որակի ջրի մեծ պաշարները, որը ներկա իրավիճակում գերազանցում են անհրաժեշտ պահանջարկը: Մարզի ջրային ցանցի երկարությունը 3395.23կմ է, ջրի ծախսը՝ 1250 լիտր/վրկ, որից ճնշումային՝ 520 լիտր/վրկ: Ջրամատակարարման համակարգը մարզի բնակչությանը և արդյունաբերությանը տարեկան տրամադրում է մոտ 17.1 մլն մ³ խմելու ջուր, որը սպառողին է հասցվում ինքնահոս եղանակով և պոմպակայանների միջոցով: Մարզի 7 քաղաքների և 57 գյուղերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը (Ջ և Ջ) կատարվում է

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ «Հյուսիս արևելյան» տարածքային մասնաճյուղի («Ալավերդի» և «Սպիտակ» տեղամասերի ու «Ստեփանավան», «Տաշիր» ենթատեղամասերի միջոցով) և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի միջոցով: Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը կատարվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչության ջրամատակարարման հարցում:

Լոռու մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2011թ. ջրամատակարարման ոլորտի համար պահանջվող գումարը եղել է **341.0 մլն** դրամ է, սակայն փաստացի պլանավորվել է կատարել **2,475.24 մլն** դրամ ծավալով աշխատանքներ, այդ թվում՝ **83.0** մլն-ը պետական բյուջեից՝ հրատապ ծրագրով:

«Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող Վանաձոր քաղաքի և 16 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավումը իրականացվում է գերմանական վերականգնման բանկի /KFW/ և ՀՀ կառավարության կողմից համաֆինանսավորվող ծրագրի միջոցով: Ծրագրի առաջին փուլով ջրամատակարարման բարելավման համար նախատեսված է 11,5 մլն Եվրո, որի իրականացումը սկսվել է 2005 թ. և նախատեսված է այն ավարտել 2011թ.: Ծրագրի երկրորդ փուլի (2011-2012թ.) նախապատրաստական գործընթացն սկսված է (նախնական գնահատականներով երկրորդ փուլի ծավալը կկազմի 7.3 մլն Եվրո):

Մարզի խոշոր բնակավայրերում հիմնականում ջրամատակարարումը կատարվում է գրաֆիկով՝ 2 օրը մեկ անգամ:

2011թ. մարզի տարբեր համայնքների խմելու ջրի մատակարարման բարելավման նպատակով կատարվել է շուրջ **1,742.60** մլն դրամի համապատասխան աշխատանքներ (այդ թվում՝ պետ բյուջեից 112.10 մլն դրամ, որից հրատապ ծրագրով՝ 78.86 մլն դրամ), որոնք ներկայացված են ստորև՝

Ջրամատակարարման ոլորտում 2011 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Շինարարական աշխատանքների անվանումը ըստ պատասխանատուների	2011թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.11թ. (մլն դրամ)
	Ընդամենը մարզում՝	2,475.24	1,742.60
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	116.24	112.10
1.	ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ (Հրատապ ծրագրով)	83.00	78.86
1.1	Լեռնահովիտի համայնքային ջրագծի հիմնանորոգում	10.00	9.00
1.2	Ճոճկանի խմելու ջրի ջրագծի կառուցում	8.00	7.26
1.3	Քարկոփի համայնքի խմելու ջրագծի կառուցում	30.00	29.2
1.4	Մեղվահովիտի խմելու ջրի ցանցի կառուցում	15.00	14.00
1.5	Ջրաշենի խմելու ջրի ցանցի կառուցում	20.00	19.40
2.	Շիրակամուտի խմելու ջրի ՕԿՋ-ի վերակառուցում (ՀՄՆՀ)	33.24	33.24
II	Համայնքային բյուջե	32.00	32.00
	Վանաձոր քաղաքի կեղտաջրերի հեռացում	32.00	32.00
III	«Շեն» ԲՀԿ և CHF (համատեղ)	63.00	63.00

1	Լոռի-Բերդ համայնքի խմելու ջրագծի կառուցում, ջրամատակարարում	13.00	13.00
2	Լեռնանցքի խմելու ջրի մատակարարման բարելավում	50.00	50.00
IV	Մասնավոր հատվածի ներդրումներ	2,264.00	1,535.50
1	KFW-Գերմանական վարկային ծրագիր «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում ջրամատակարարման համակարգերի բարելավում	1,623.00	1,250.00
2	«Եվրոպական վերակառուցման» և «Ասիական բանկի» ծրագրեր «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 38 համայնքների խմելու ջրի մատակարարում եւ ջրահեռացման համակարգերի աշխատանքների բարելավում	641.00	285.50

5.3. Գազամատակարարում

Գազֆիակցումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Համայնքներում գերակա խնդիր է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը:

Լոռու ԳԳՄ սպասարկման տարածքում խորհրդային տարիներին եղել են 42220 բաժանորդներ, որոնցից 20708-ը Վանաձոր քաղաքում:

Առ 30.12.2011թ. դրությամբ Լոռու ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքի գազամատակարարումը վերականգնված և գազֆիկացված բնակավայրերում վերականգնվել և գազֆիկացվել են թվով 32896 առանձնատներ և 28450 բնակարաններ, որից թվով 29357-ը Վանաձոր քաղաքում:

2011թ. բաժանորդների թվաքանակը աճել է 959-ով, որից 393 բնակարաններ և 566 առանձնատներ:

2011թ. մարզի 3 համայնքներում նախատեսվել է կատարել 83.43 մլն դրամի գազֆիկացման աշխատանքներ, որից 53.0 մլն դրամը պետ. Բյուջեից՝ հրատապ ծրագրով: Կատարվել է 79.97 մլն դրամի համապատասխան աշխատանքներ (այդ թվում պետ բյուջեից հրատապ ծրագրով՝ 49.54 մլն դրամ), որոնք ներկայացված են ստորև՝

Գազամատակարարման ոլորտում 2011 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները ըստ ֆինանսավորման աղբյուրների

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2011թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 30.12.11թ.	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	83.43	79.97	
	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	83.43	79.97	
I	ՀՀ Լոռու մարզպետարան	53.00	49.54	
1.	Յաղդանի գազամատակարարական վերանորոգում	30.00	28.24	Հրատապ ծրագիր
2.	Կողեսի գազամատակարարման վերանորոգում	23.00	21.30	Հրատապ ծրագիր
II	«Հայաստան» համահայկական հիմնադրամ	30.43	30.43	
3.	Արծնու գազֆիկացում	30.43	30.43	

5.3.1 Էլեկտրամատակարարում

2011 թվականին մասնավոր հատվածի միջոցներով մարզում իրականացվել են էլեկտրամատակարարման աշխատանքներ՝ գրանցվել է թվով 134 նոր բաժանորդ, որի համար «ՀԷՅ» ՓԲ ընկերության կողմից կատարվել է շուրջ 92.3 մլն դրամ գումարի ներդրում:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

6.1 Տարածքային կառավարում

Տարածքային կառավարման հիմնական գերակայություններից մեկը հանդիսացել է մարզային և տեղական իշխանությունների փոխհարաբերությունների զարգացումը: Իրականացվել է իրավական և մասնագիտական վերահսկողություն ինքնակառավարման մարմինների՝ համայնքների ղեկավարների, ինչպես նաև ավագանիների կողմից իրականացվող գործառույթների ու կայացվող որոշումների նկատմամբ:

Միջոցներ են ձեռնարկվել մարզպետարանի և համայնքների միջև միասնական տեղեկատվական ցանց ստեղծելու ուղղությամբ, որը կլինի արագ, հասանելի և կբարձրացնի համայնքների իրազեկությունը, ինչպես նաև հիմք կհանդիսանա հետագայում էլեկտրոնային խորհրդակցությունների անցկացման համար:

Տարածքային կառավարման բաղադրիչի նպատակն է եղել բարելավել պետական կառավարումը մարզում՝ ապահովելով կառուցվածքային կառավարչական համակարգերի և մարզպետարանի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացումը:

- Մարզպետի կողմից ստեղծված վարչական վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն 2011թ.-ին իրականացրել է վարչական և ֆինանսական հսկողություն մարզի 20 համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից իրականացվող գործառույթների ու կայացվող որոշումների նկատմամբ:
- 2011թ.-ին մարզպետարանում աշխատող 37 քաղաքացիական ծառայողներ մասնակցել են քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:
- Շարունակվել է մարզպետարանի տեղեկատվական և կառուցվածքային կառավարչական համակարգերի բարելավումը: Մարզպետարանում փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգի միջոցով: Մարզպետարանի աշխատակազմի համակարգչային տեխնիկան 2011թ.-ին ՀՀ կառավարության կողմից համալրվել է 70 նոր համակարգչներով:
- Կարևորվել է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերը համակարգիչներով և ինտերնետ կապով ապահովելու խնդիրը: Մարզի 113 համայնքներից 95-ը ունեն համակարգիչներ, ինտերնետ կապ՝ 38-ը:
- Աջակցություն է ցուցաբերվել մարզի զինկոմիսարիատներին՝ կցագրման, գարնանային զորակոչի աշխատանքների կազմակերպման հարցերում:

- Կազմակերպվել է ՀՀ բնակչության պետական ռեգիստրում մարզի համայնքների երեխաների հաշվառման աշխատանքները:
- Աջակցություն է ցուցաբերվել ՀՀ ԱՎԾ-ի աշխատակազմի Լոռու մարզային գործակալությանը մարդահամարի կազմակերպման և անցկացման ժամանակ:
- Ըստ անհրաժեշտության աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ (անշարժ գույքի և կադաստրի ստորաբաժանումներ, անձնագրային բաժիններ, զինկոմիսարիատներ, վիճակագրության ծառայություն, քաղաքաշինության տեսչության մարզային բաժիններ, մարզային փրկարարական վարչություն, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունք և այլ ծառայություններ):

6.2. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում

Բարելավվել է ինքնակառավարման մակարդակը, զարգացել է համայնքային ծառայության համակարգը, խորացվել է առկա համագործակցության մակարդակը համայնքների միջև, բարձրացվել են տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները:

2011թ.-ի ՄԾԾ ամենակարևոր խնդիրներից մեկը եղել է ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումը:

Աշխատանքներ են իրականացվել ՏԻՄ-երի գործունեությանը հասարակության իրազեկության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ և ապահովելու քաղաքացիական հասարակության մասնակցությունը հանրային կարևորություն ներկայացնող ծրագրերի քննարկման, մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում:

Կազմակերպվել են համայնքների ղեկավարների և ավագանու անդամների վերապատրաստումներ:

Համայնքային ծառայության համակարգի զարգացումն ապահովելու համար իրականացվել են համայնքային ծառայողների, համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստումներ: Համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալները մշտապես հավաքագրվել և մուտքագրվել են միասնական հանրապետական շտեմարանում:

2011թ.-ին լուրջ ուշադրություն է դարձվել համայնքային բյուջեների կազմման, բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների հաստատման հրապարակայնության գործընթացի վրա՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները և համայնքների բնակչության ցանկությունները:

ՄԾԾ-ի ամենակարևոր խնդիրներից մեկը եղել և մնում է ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումն ու տեղական եկամուտների հավաքագրման աճը պլանավորված մակարդակին հասցնելը:

2011թ.-ին՝

- Համագործակցելով «Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա» ՀԿ-ի հետ կազմակերպվել է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի 287 պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների, ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարներ և ավագանու անդամներ) 75 ներկայացուցիչների վերապատրաստումները:
- Կազմակերպվել և անցկացվել են մարզի խորհրդի 6 նիստեր:
- Մշտական մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների կիրարկման գործում:
- Իրականացվել է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի 366 համայնքային ծառայողների ատեստավորումներ և 46 թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ:
- Կազմակերպվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության վերահսկումը, թերի կամ գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանող որոշումների մասին տեղյակ է պահվել դրանք ընդունող ՏԻՄ-երին և առաջարկվել է դրանք լրամշակել և համապատասխանեցնել գործող օրենսդրությանը:
- Մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և նրանց աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման և գործավարության կազմակերպման հարցերում:
- 2011թ.-ի ընթացքում աճել են մարզի համայնքների ՏԻՄ-երի բյուջետային կարողությունները համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման աճի շնորհիվ, հասցնելով պլանավորված մակարդակի 87.8 %-ի (2011թ.-ի փաստացի կատարողականը 2010թ.-ի նկատմամբ 100.6%):

6.2.1. Համայնքային զարգացման ծրագրեր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2011թ.-ին լուրջ ուշադրություն է դարձվել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացի վրա:

- հասարակության իրազեկության աստիճանը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բարձրացնելու և քաղաքացիական հասարակության մասնակցությունը հանրային կարևորություն ներկայացնող ծրագրերի մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում ապահովելու նպատակով Լոռու մարզպետարանը և World Vision միջազգային բարեգործական կազմակերպությունը՝ Լոռու փրկարարական ջոկատի օգնությամբ Թումանյանի տարածաշրջանի 11 համայնքների (Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքրի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ) ակտիվ ներկայացուցիչների համար կազմակերպել են՝ Առաջին Օգնության՝ և

՝ Աղետների կանխարգելում թեմաներով դասընթացներ: Համայնքների համար մասնակցային մեթոդով մշակվել է «Աղետների կառավարման պլան»

2011թ. ՀՀ պետական բյուջեից հրատապ ծրագրով համայնքային կենտրոնների (գյուղապետարանների) շենքերի կառուցման և վերանորոգման համար հատկացվել է **156.37** մլն դրամ:

Համայնքային կենտրոնների կառուցման համար պետական բյուջեից 2011 թ. Լոռու մարզում նախատեսված և իրականացված աշխատանքները

Հ/Հ	Օբյեկտի և ծրագրի անվանումը	2011թ. Ծրագիր (մլն դրամ)	Կատարվել է առ 31.12.11թ.	Ծանոթություն
	Ընդամենը մարզում՝	156.37	156.37	
I	ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	156.37	156.37	
1.	Գյուղագարակի համայնքային կենտրոնի շենքի կառուցում	116.37	116.37	Հրատապ ծրագրով
2.	Նեղոցի գյուղապետարանի շենքի կառուցում	30.00	30.00	Հրատապ ծրագրով
3.	Օծունի գյուղապետարանի շենքի տանիքի հիմնանորոգում	10.00	10.00	Հրատապ ծրագրով

6.3. Քաղաքացիական հասարակություն

Տարածքային կառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ✓ Մարզի տարածքում գործող ՁԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ են հեռարձակվել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և իրականացվող ծրագրերը, պարբերաբար հրապարակվել են առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն և նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:
- ✓ Պարբերաբար կազմակերպվել է մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք ուղեկցվել են տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ բնակչությունը հնարավորություն է ունեցել ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:

- ✓ Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել են մարզպետի այցելությունները համայնքներ, ինչպես նաև տարածաշրջանային կենտրոններում կազմակերպվել են քաղաքացիների ընդունելություններ:
- ✓ Մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ մարզի հեռուստաընկերությունների միջոցով կազմակերպել են ուղիղ եթերներ, հանրությանը հնարավորություն ընձեռնելով իրենց հուզող հարցերը ուղիղ կապով իրավասու անձին ուղղելու և պատասխանը անմիջապես լսելու համար:
- ✓ Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները մասնակցել են մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:
- ✓ Պարբերաբար իրականացվել են մարզպետարանի ինտերնետային կայքէջի թարմացման աշխատանքներ, հանրային իրազեկման նպատակով կայքում տեղադրվել են մարզպետի բոլոր որոշումներն ու կարգադրությաունները: Թարմացվել են կայքի նորություններ բաժինը, տեղադրվել են համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների վերաբերյալ հայտարարությունները:
- ✓ Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկություն և հրապարակայնություն ապահովելու նպատակով՝ ուշադրություն է դարձվել համայնքապետարաններում և համայնքի բնակչության համար առավել տեսանելի վայրերում տեղադրված տեղեկատվական ցուցատախտակներ առկայության և այդ տախտակների վրա տեղադրվող համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումների, այլ կարևոր բնույթի տեղեկատվության արդիականությանն ու փոփոխման պարբերաբարականությանը:
- ✓ Մարզի բնապահպանական տեսանկյունից կարելուր խնդիրներ առաջացնող նախագծերին առավել լայն հնչեղություն տալու նպատակով, մարզպետարանի բնապահպանության բաժնի կողմից կազմակերպվել են քննարկումներ, հասարակական լուծումներ, որոնք հիմնականում անց են կացվել մարզում գործող երեք բնապահպանական տեղեկատվական Օրհուս կենտրոններում (Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան): Տվյալ հասարակական լուծումներին մասնակցելու են հրավիրվել ինչպես համապատասխան գերատեսչությունների և կազմակերպությունների փորձագետներ, այնպես էլ շահագրգիռ ՏԻՄ-երի, բնապահպանական ՀԿ-ների, ԶԼՄ-ների, ինչպես նաև հասարակության ակտիվ ներկայացուցիչներ: 2011թ. ընթացքում Վանաձորի, Ալավերդու և Ստեփանավանի Օրհուս կենտրոններում անց են կացվել տարաբնույթ 258 բնապահպանական միջոցառումներ, որոնց ընդհանուր մասնակցել են 3893 մարդ:

7. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2011թ. Լոռու մարզպետարանի աշխատակազմի կողմից արտաքին կապերի և միջազգային համագործակցության ոլորտում կատարված աշխատանքները բերված են աղյուսակ 1-ում:

Արտաքին կապերի ոլորտում 2011թ-ին Լոռու մարզպետի աշխատանքների կատարողականի վերաբերյալ

աղյուսակ 1

h/h	Աշխատանքի ուղղությունը	Միջոցառման անվանումը		Միջոցառումների ժամկետները		Աշխատանքի կատարման արդյունքները
		նախատեսված	Չնախատեսված, փաստացի կատարված	Նախատեսված	փաստացի	
1.	Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ մարզպետարանի իրավասության ոլորտներին վերաբերող դրույթների և/կամ այլ փաստաթղթերի կատարում	Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW գերմանական վարկային ծրագիր		2011թ	2011թ	«Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում իրականացվել են 2 449 003 եվրո արժողությամբ ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի վերականգնման, վերակառուցման, զարգացման, բնակավայրերի գոտիավորման, խմելու ջրի արդյունավետ բաշխման եւ հաշվառման խնդիրների, ինչպես նաեւ կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրման
		Հայաստանի Սոցներդրումների հիմնադրամ		2011թ տարվա ընթացքում	2011թ	<p>Իրականացվել են 556.08 մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> ➢ Ալավերդու հիվանդանոցի հիմնանորոգում (II փուլ) 95.70մլն դրամ ➢ Գյուլագարակի համայնքային կենտրոնի շենքի կառուցում 116.37մլն.դրամ ➢ Վանաձերի թվ 2 հիվանդանոցի հիմնանորոգում 30.15մլն դրամ ➢ Խնկոյանի մշակույթի տան հիմնանորոգում 59.95մլն դրամ ➢ Թեղուտի դպրոցի հիմնանորոգում 109.72 մլն.դրամ ➢ Ալավերդու թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում 83.85մլն.դրամ ➢ Շիրակամուտի խմելու ջրի ՕԿՋ-ի վերակառուցում 33.24մլն դրամ ➢ Ալավերդու թիվ 4 դպրոցի ջեռուցման համակարգի վերակառուցում, տանիքի եւ սանհանգույցների վերանորոգում 27.10մլն դրամ

Դպրոցաշինություն ԾԻԳ ՊՀ		2011թ տարվա ընթացքում	2011թ	Նախատեսված էր 890.06 մլն դրամի աշխատանքներ (Վանաձորի թիվ 22 դպրոցի մարզադահլիճի կառուցում – 264.56 մլն դրամ, Ստեփանավանի թիվ 6 դպրոցի մարզադահլիճի կառուցում – 296.04 մլն դրամ, Սպիտակի թիվ 1 դպրոցի մարզադահլիճի կառուցում – 329.46 մլն դրամ)
«Թափոնների կառավարում – ԵՀԳԳ Արեւելք» տարածաշրջանային ծրագիր		2009-2013թթ	2011թ	Հայաստանի Հանրապետությունում ծրագրի իրականացման համար Լոռու մարզն ընտրվել է պիլոտային շրջան, որտեղ իրականացվելու է աղբավայրերի գույքագրում եւ կմշակվի թափոնների կառավարման 15 տարվա ռազմավարություն: 2011թ-ի մարտից մեկնարկվել է մարզում աղբավայրերի գույքագրման աշխատանքները:
«Ասիական բանկ» վարկային ծրագիր		2011թ	2011թ	Մարզի Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջանի համայնքների խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման բարելավման նպատակով իրականացվել է 185 մլն. դրամի աշխատանքներ
«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ՄԲԿ Հայաստանյան մասնաճյուղ		2011 թ	2011թ	2011թ կազմակերպության կողմից ֆինանսավորվել է 73.89մլն դրամ ծավալով աշխատանքներ, որն իրականացվել է Ալավերդու գրասենյակի միջոցով Թումանյանի տարածաշրջան 10 գյուղական համայնքներում՝ 61.73մլն դրամի եւ Ստեփանավանի գրասենյակի միջոցով՝ Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջանների 20 համայնքներում՝ 12.16մլն դրամի:
«Շեն» ԲՀԿ եւ CHF (ԱՄՆ ՄՁԳ)		2011թ	2011թ	2011թ տարեկան կտրվածքով նախատեսվել էր 92.0մլն դրամի աշխատանքներ, սակայն իրականացվել է 90.5մլն դրամ 1. Շահումյանի Համայնքային կենտրոնի վերանորոգում- արժեքը 14.00մլն դրամ 2. Լոռի-Բերդ համայնքի խմելու ջրագծի կառուցում, ջրամատակարարում - արժեքը 13.5մլն դրամ 3. Արծնի համայնքի խմելու ջրագծի եւ ներքին ցանցի կառուցում –արժեքը 33մլն դրամ 4. Լեռնանցք համայնքի ջրագծի կառուցումն արժեքը 31 .5մլն դրամ – իրականացվել է 25.1մլն դրամ, ծրագիրն ընդթացքի մեջ է

		«Փրկեք երեխաներին» բարեգործական կազմակերպություն		2011թ	2011թ	Մարզում իրականացվել է 2352.04մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝ 1. Վանաձորի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում 20.00մլն դրամ 2. Սպիտակի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում 21.0մլն դրամ
		ՄԱԿ-ի (UNDP) ծրագիր		2011թ	2011թ	Վանաձոր քաղաքի ՊԵՏ շշերի հավաքման համար 120 աղբարկղների, աղբի տեղափոխման եւ պահեստավորման նպատակով 1 մեքենայի եւ 1 մամլիչ սարքի տրամադրում: Ընդհանուր արժեքը 5.88մլն դրամ:
			ՄԱԿ-ի պարենի ծրագիր		2011թ	Մարզի գյուղական համայնքների 49 մանկապարտեզներին բաշխվել է 4526լ բուսական յուղ
2.	Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ համաձայնագրի կամ այլ փաստաթղթերի (ծրագրերի) կնքում և կատարում	Համագործակցություն «Եվրոպական ռեզիդենների ասամբլեայի» հետ		2011թ	2011թ ապրիլ	Լոռու մարզպետը մասնակցել է Աջարիայի Ինքնավար Հանրապետության Բաթումի քաղաքում տեղի ունեցած Եվրոպական Ռեզիդենների ասամբլեայի Սեւ ծովյան տարածաշրջանի քաղաքականության «Ընդհանուր սահմաններ, ընդհանուր լուծումներ» 2-րդ կոնֆերանսին: Արդյունքում ապրիլի 6-ին ստորագրվել է «Բաթումիի հռչակագիրը», որի համաձայն մասնակիցները պարտավորություն են ստանձնել համատեղ աշխատելու Սևծովյան տարածաշրջանի համագործակցության և կայուն զարգացման համար

<p>Լոռու մարզի և Ֆրանսիայի Պրովանս-Ալպ Կոտ դ'Ազուր (ՊԱԿԱ) ռեգիոնի միջև կնքված համագործակցության պայմանագիր</p>		<p>2011թ տարվա ընթացքում</p>	<p>2011թ</p>	<p>Համաձայնագրի շրջանակներում իրականացվել են.</p> <ol style="list-style-type: none"> 1. Սպիտակ քաղաքում 2009թ-ից ստեղծված է «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» կոմիտեի աջակցությամբ 2010-11թ-ին «Սպիտակ» ծրագրի շրջանակներում, Լոռու մարզի Սպիտակ քաղաքի եւ այլ քաղաքների առողջապահական հիմնարկների հետ իրականացվել են բարեգործական ծրագրեր, մատակարարելով՝ դեղորայք եւ բժշկական պարագաներ: 2. ՊԱԿԱ ռեգիոնի եւ Լոռու մարզի առևտրա-արդյունաբերական պալատի փորձագետների եւ մասնագետների շնորհիվ իրականացվել է Լոռու մարզի բոլոր տարածաշրջանների համար տնտեսական ինտերակտիվ քարտեզի աշխատանքները: 3. «ԳՐԵՖ» թոշակառու մանկավարժների ֆրանսիական կազմակերպության ներկայացուցիչների կողմից իրականացվել է ՎՊՄԻ-ի, ԵԿՏԱ-ի Վանաձորի մասնաճյուղի եւ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական համալսարանի ֆրանսերեն դասավանդող դասախոսների, ինչպես նաեւ, Վանաձոր, Ստեփանավան եւ Ալավերդի քաղաքների դպրոցներում ֆրանսերեն լեզու դասավանդող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ 4. ՊԱԿԱ-ի եւ Լոռու մարզի հետագա համագործակցության համար մշակվել է մտադրությունների արձանագրության նախագիծ տարբեր բնագավառներում աշխատանքների իրականացման համար 5. DSF ֆրանսիական կազմակերպության ներքո ստեղծված «Նոենի» ՀԿ-ն սեպտեմբեր մասից սկսել է «Մոր եւ մանկան պաշտպանություն, ուսուցանողների ուսուցում եւ կատարելագործում» ծրագիրը, ընդհանուր արժեքը 49.2 հազ եվրո, որից իրականացվել է 17.0հազ եվրո, ծրագիրն ընթացքի մեջ է
--	--	------------------------------	--------------	--

		<p>ՀՀ Լոռու մարզի և ՉժՀ Շանսի նահանգի միջև համագործակցության կապերի հաստատում և զարգացում</p>		<p>2011թ</p>	<p>2011թ</p>	<p>Համաձայն ՉժՀ Շանսի նահանգի կառավարությունից ստացված հրավերքի նոյեմբերի 12-20-ին ՉժՀ Շանսի նահանգ էր մեկնել Լոռու մարզի պատվիրակությունը մարզպետ Ա. Նալբանդյանի գլխավորությամբ: ՀՀ-ում Չինաստանի դեսպանության և Չինաստանում Հայաստանի դեսպանության կողմից նախապատրաստական լուրջ աշխատանքի շնորհիվ, բանակցությունների արդյունքում, Թայուան քաղաքում, 2011թ նոյեմբերի 14-ին ստորագրվել է Հուշագիր «ՀՀ Լոռու մարզի եւ ՉժՀ Շանսի նահանգի միջև բարեկամական կապերի վերաբերյալ» եւ Արձանագրություն «ՀՀ Լոռու մարզի եւ ՉժՀ Շանսի նահանգի միջև առետրա-տնտեսական համագործակցության մասին», ապա «Համագործակցության վերաբերյալ մտադրությունների արձանագրություն» ՉժՀ Շանսի նահանգի Յունչեն և Լոռու մարզի Ստեփանավան քաղաքների քաղաքապետերի միջև:</p> <p>Դեկտեմբերին երկու մարզերի առետրա-տնտեսական համագործակցության շրջանակներում մարզպետարանի կողմից ՀՀ ՏԿՆ է ներկայացվել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Լոռու եւ Տավուշի մարզերում Լավվար-Կոդբ տեղամասի 398քառ կմ տարածքում որոնողական եւ որոնողագնահատողական աշխատանքների կատարման վերաբերյալ առաջարկ ՀՀ ԱԳՆ փոխանցելու համար:</p>
		<p>ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի, ՀՀ բնապահպանության նախարարության եւ Լոռու մարզպետարանի միջև կնքված փոխըմբռնման հուշագիր</p>		<p>2011թ</p>	<p>2011թ 1-ին կիսամյակ</p>	<p>Բազմակողմ աջակցություն է ցուցաբերվել մարզում գործող երեք (Վանաձորի, Ալավերդու, Ստեփանավանի) Օրիուս բնապահպանական տեղեկատվական կենտրոնների աշխատանքներին և կյանքի են կոչվել մի շարք ծրագրեր՝ մարզի շրջակա միջավայրի պահպանության, էկոլոթական միջոցառումների, կենդանական ու բուսական աշխարհի վերարտադրության, ինչպես նաև բնապահպանական, կրթության բարձրացման նպատակով: Ծրագրի շրջանակներում քննարկվել է Ալավերդի քաղաքի նոր թափոնակուտակիչի (աղբավայրի) կառուցման նախագիծը:</p>

3.	<p>Աշխատանքային, ուսուցողական, ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, մարզ այցելող օտարերկրյա պետությունների տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ընդունում և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում</p>	<p>Եվրոմիության պատվիրակությունը Հայաստանում ներկայացուցչի Ֆրեդ Միլանի այցը Լոռու մարզպետարան</p>		2011թ նոյեմբերի 23	<p>Այցի նպատակն էր առաջարկություն աջակցություն ցուցաբերելու տարածաշրջանում տնտեսական համահարթեցմանն ուղղված ծրագրերին, նախատեսվող ծրագրերի ֆինանսավորման 80%-ը կնխատեսվի գործնական եւ 20%-ը տեխնիկական ապահովման համար:</p> <p>Արդյունքում մարզպետարանը ներկայացրել է 4 ծրագրային նախագծեր (մարզի տարածաշրջաններում հակակարկտային կայանքների տեղադրում, մրգի եւ վայրի հատապտուղների վերամշակման փոքր արտադրամասերի, մրգի, կարտոֆիլի և բանջարեղենի պահեստավորման, տեսակավորման, փաթեթավորման տնտեսության ստեղծում եւ զբոսաշրջային B&B տների ասոցիացիայի հիմնում),:</p>
		<p>Համագործակցություն ՀՀ Լոռու մարզի եւ «Ֆրանկոֆոն ռեգիոնների միջազգային ասոցիացիա»</p>		2011թ նոյեմբեր-դեկտեմբեր	<p>2011թ. դեկտեմբերի 7-ից Լոռու մարզը դարձել է «Ֆրանկոֆոն ռեգիոնների միջազգային ասոցիացիա»-ի լիիրավ անդամ</p>
4.	<p>Բազմակողմ և այլ միջոցառումներ</p>	<p>Լոռու մարզպետարանի եւ Բրիտանական խորհրդի միջեւ բանավոր պայմանավորվածություն</p>	2011թ Մարտ	2011թ Մարտի 10-12	<p>«Բրիտանական ֆիլմերի 9-րդ փառատոն»-ի ակցիայի շրջանակներում Վանաձոր քաղաքում մարտի 10-ից 12-ը ցուցադրվեցին բրիտանական արտադրության «Արբոր», «Վարդագույն սարիներ», «Ժողովրդի թշնամիներ» 3 ֆիլմերը (հայերեն ենթագրերով): Այս տարի փառատոնը նվիրված էր մարդու իրավունքների պաշտպանությանը եւ կանանց դերի բարձրացմանը հասարակության մեջ:</p>

**«Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում
2011թ. Լոռու մարզում իրականացված աշխատանքներ***

N	Պատվիրատու	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը /դրամ/	Աշխատանքի սկիզբ	Աշխատանքի ավարտ
1	Ճոճկանի գյուղապետարան	Ճանապահամերձ տարածքների մաքրման և ծառատնկման օժանդակ աշխատանքներ	1515200	01.03.2011թ.	01.04.2011թ.
2	Գուգարքի գյուղապետարան	Ներհամայնքային ճանապարհների վերանորոգման և բակային տարածքների սանիտարական մաքրման օժանդակ աշխատանքներ	1455400	01.04.2011թ.	01.06.2011թ.
3	Ձորագյուղի գյուղապետարան	Համայնքի կենտրոնի կառուցապատման և բարեկարգման օժանդակ աշխատանքներ	1770400	01.04.2011թ.	01.07.2011թ.
4	Ալավերդու քաղաքապետարան	Մարտի 8-ի անվան փողոցի և հեղեղատարի մաքրման օժանդակ աշխատանքներ	1164400	01.04.2011թ.	01.06.2011թ.
5	Թումանյանի քաղաքապետարան	Քաղաքի հրապարակի և փողոցների բարեկարգման և սելավատարների մաքրման օժանդակ աշխատանքներ	1455400	01.04.2011թ.	01.06.2011թ.
6	Արևաշողի գյուղապետարան	Մանկապարտեզի տարածքի ցանկապատման և բարեկարգման օժանդակ աշխատանքներ	1770400	01.04.2011թ.	01.07.2011թ.
7	Շիրականուտի գյուղապետարան	Համայնքի կենտրոնի բարեկարգման և կանաչապատման օժանդակ աշխատանքներ	1770400	01.04.2011թ.	01.07.2011թ.
8	Յաղդանի գյուղապետարան	Ներհամայնքային ճանապարհների վերանորոգման, ճանապարհամերձ տարածքների և համայնքի կենտրոնի սանիտարական մաքրման օժանդակ աշխատանքներ	1455400	01.04.2011թ.	01.06.2011թ.
9	Տաշիրի քաղաքապետարան	Կանաչապատ տարածքների ընդլայնման, ծառատնկման և բազմաբնակարան շենքերի բակերի սանիտարական մաքրման և բարեկարգման օժանդակ աշխատանքներ	1770400	01.04.2011թ.	01.07.2011թ.
Ընդամենը			9 ծրագիր	14,127,400 դրամ	

**) «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում ֆինանսավորման դադարեցման պատճառով 2011թ. երկրորդ կիսամյակում աշխատանքներ չեն իրականացվել*

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն ըստ ծրագրերի, ծախսատեսակների և կատարողների (առանց օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ տրամադրված նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծախսերի)

Հազ.դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման			Ծրագրի N	ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	այդ թվում՝			
						Շենքերի և շինությունների շինարարություն	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	նախագծա-հետագրության, գեոդեզիաքարտեզագրական աշխատանքներ	Ոչ ֆինանսական ակտիվների գծով այլ ծախսեր
բաժին	խումբ	դաս							
				ՀՀ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	232.969.5	174.000.0	0,0	41.000.0	17.969.5
08	02	07.	03	Հուշարձանների վերանորոգում և վերականգնում	215.000.0	174.000.0	0,0	41.000.0	0,0
				ՀՀ Լոռու մարզ	48.500.0	35.000.0	0,0	13.500.0	0,0
				գ. Քոբեր ե/կայարան Քոբայրավանք	15.000.0	15.000.0		11.000.0	
				գ. Սանահին, Սանահինի վանքային համալիր	6.000.0			6.000.0	
				գ. Լոռի բերդ «Լոռի Բերդ» ամրոց	7.500.0			7.500.0	
				Օձունի վանք	20.000.0	20.000.0			
				ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	3.958.500.0	739.249.0	3.081.547.0	137.704.0	0,0
04	05	01	02	Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում	3.775.003.0	739.249.0	2.912.550.0	123.204.0	0,0
				1.ճանապարհների հիմնանորոգում	3.337.550.0	425.000.0	2.912.550.0	0,0	0,0
				1.1 Միջպետական նշանակության ա/ավտոճանապարհներ	427.790.0	175.000.0	252.790.0	0,0	0,0
				Ա/Ճ Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիրի-Վրաստանի սահման	54.500.0	0,0	54.500.0	0,0	0,0
				կմ 174+240-կմ 179+240	54.500.0		54.500.0		
				Ա/Ճ Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման	175.000.0	175.000.0	0,0	0,0	0,0
				34-րդ կմ-ում ստորին հենապատի կառուցում	175.000.0	175.000.0			

				1.2 Հանրապետական նշանակության ա/ճանապարհներ	2.165.440.0	0,0	2.165.440.0	0,0	0,0
				Հ-169, /Մ-3/-Ջրաշեն-Լեռնավան	248.000.0		248.000.0		
				Հ-182, /Մ-3/-Պուշկին	100.000.0		100.000.0		
				Հ-184, Մ-3-Նորաշեն-Սարչապետ (Նորաշեն- Սարչապետ հատված)	230.000.0		230.000.0		
				1.3 Մարզային նշանակության ճանապարհներ	744.320.0	250.000.0	494.320.0	0,0	0,0
				Հ-24 Գյուլագարակ-Թումանյան կայարան Մ-6 ա/ճանապարհի 17-18կմ-ի սողանքային հատվածի շրջանցում	250.000.0	250.000.0			
04	05	01	04	Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, այդ թվում	183.497.0	0,0	168.997.0	14.500.0	0,0
				Հ-24-Հրբարձի ա/ճ-ի կամուրջ	21.985.0		21.985.0		
				2.Մարզային նշանակության ճանապարհներին, այդ թվում	100.962.0	0,0	100.962.0	0,0	0,0
				Լոռու մարզ	100.962.0	0,0	100.962.0	0,0	0,0
				Շիրակամուտ-Գեղասար ճանապարհի կամուրջ	12.962.0		12.962.0		
				Մ-3-Արջահովիտ երկու կամուրջ	28.000.0		28.000.0		
				S-5-22, Հ-24 Սոճուտ հ/տ կամուրջ	60.000.0		60.000.0		
				ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	35.148.973.1	1.382.619.3	6.768.272.1	6.000.0	26.992.081.1
06	01	01	01	Բնակարանային շինարարություն	26.972.081.1	0,0	0,0	0,0	26.972.081.1
				աղետի գոտում անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու նպատակով ՌԴ վարկային միջոցների հաշվին անշարժ գույքի ձեռքբերում	26.972.081.1				26.972.081.1
08	02	03	01	Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	424.835.4	0,0	424.835.4	0,0	0,0
				ՀՀ Լոռու մարզ	15.799.0	0,0	15.799.0	0,0	0,0
				Ծաթեր համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում I փուլ	15.799.0		15.799.0		

08	02	03	04	Շենքերի և շինությունների ձեռքբերում	20.000.0	0,0	0,0	0,0	20.000.0
				ՀՀ Լոռու մարզ	20.000.0	0,0	0,0	0,0	20.000.0
				Նոր Խաչակապի համայնքային կենտրոն	20.000.0				20.000.0
				ՀՀ Լոռու մարզ	13.600.0	0,0	13.600.0	0,0	0,0
				Վանաձորի Հովհ.Աբելյանի անվ. Պետական դրամատիկական թատրոն	13.600.0		13.600.0		
09	06	01	02	Կրթական օբյեկտների հիմնանորոգում	4.172.726.0	0,0	4.172.726.0	0,0	0,0
				ՀՀ Լոռու մարզ	327.000.0	0,0	327.000.0	0,0	0,0
				ք. Ալավերդու արհեստագործական ուսումնարան՝ ՊՈԱԿ	50.000.0		50.000.0		
				գ. Դսեղի միջնակարգ դպրոց	175.000.0		175.000.0		
				գ. Քարաձորի դպրոց	22.000.0		22.000.0		
				Վանաձորի թիվ 24 դպրոց	80.000.0		80.000.0		
09	06	01	08	Ավագ դպրոցների հիմնանորոգում	1.196.443.0	0,0	1.196.443.0	0,0	0,0
				ՀՀ Լոռու մարզ	117.000.0	0,0	117.000.0	0,0	0,0
				Վանաձորի թիվ 17 դպրոց	117.000.0		117.000.0		

2011թ. ընթացքում Լոռու մարզի համայնքներում միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորված ծրագրերի իրականացման վերաբերյալ

ՀՀ Լոռու մարզի համայնքներում միջազգային կազմակերպությունների կողմից 2011թ. իրականացվել է 184.74 մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝

- ❖ «Փրկեցեք երեխաներին» - 31.00 մլն դրամ
- ❖ «Շեն» ԲՀԿ-ի եւ CHF հետ համատեղ - 79.85 մլն դրամ
- ❖ «Վորլդ Վիժն ինտերնեյշնալ» ՄԲԿ - 73.89 մլն դրամ

*Աղյուսակ 1
(մլն դրամ)*

Կազմակերպությունը	2011թ. պլանավորած	2011թ իրականացված	
		կազմակերպություն	Այդ թվում համայնքի ներդրում
ՓՐԿԵՑԵՔ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ	31.00	31.0	
1. Վանաձորի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում	20.00	20.0	
2. Սպիտակի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում	21.00	21.0	
«ՇԵՆ» ԲՀԿ-ի եւ CHF հետ համատեղ	92.0	79.85	5.75
1. Շահումյանի Համայնքային կենտրոնի վերանորոգում	14.00	12.3	1.7
2. Լոռի-Բերդ համայնքի խմելու ջրագծի կառուցում, ջրամատակարարում	13.5	11.8	1.7
3. Արծնի համայնքի խմելու ջրագծի եւ ներքին ցանցի կառուցում	33.0	31.35	1.65
4. Լեռնանցք համայնքի ջրագծի կառուցում	31.5	24.4	0.7
«Վորլդ Վիժն ինտերնեյշնալ» ՄԲԿ		73.89	7.1
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ		184.74	12.85

Լոռու մարզում «Վորլդ Վիժն Ինտերնեյշնալ» ՄԲԿ –ի Ալավերդու և Ստեփանավանի գրասենյակների միջոցով 01.01.12թ. դրությամբ իրականացված **73.89 մլն** դրամի (Ստեփանավանի եւ Տաշիրի տարածաշրջանի համայնքներում՝ **12.16**մլն դրամի և Թումանյանի տարածաշրջանի 10 համայնքներում՝ **61.73** դրամի) աշխատանքներ

Աղյուսակ 2

h/h	Համայնքը	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը
1	Ամրակից	Դպրոցին տրվել է համակարգիչ մոնիտորով, ամբուլատորիային՝1 տոնոմետր եւ 1 կշեռք	187, 900 դրամ
2	Լոռի-Բերդ	Դպրոցին դահլիճին վարագույր, 1 մոնիտոր, համայնքային գրադարանին՝ 3 պահարան, ամբուլատորիային՝ գլյուկոմետր	323,050 դրամ
3	Լեջան	Մանկապարտեզին տրամադրվել է գորգ, Ամբուլատորիային տրամադրվել է մանկական սեղան	108,000 դրամ
4	Սվերդլով	Դպրոցին տրամադրվել է բազմաֆունկցիոնալ տպագրական սարք, ամբուլատորիային՝ պահարան, 3 աթոռներ եւ գրասենյակային սեղան	272,500 դրամ
5	Յաղրան	Համայնքային գրադարանի համար՝ 2 գրապահարան, գրքեր: Դահլիճի հատակի վերանորոգում: Բուժկետին տրվել է 1 գլյուկոմետր, 1 մանկական սեղան, բուժկետի վերանորոգման համար տրամադրվել են նյութեր	1.208,800 դրամ
6	Ագարակ	Դպրոցին տրամադրվել է բազմաֆունկցիոնալ տպագրական սարք, ամբուլատորիային՝ տոնոմետր եւ կշեռք	121,998 դրամ
7	Կողես	Դիզայնի խմբակին հատկացվել են պարագաներ	109,750 դրամ
8	Կուրթան	Տրամադրվել է ակումբին՝ գույք, դպրոցին տրվել է համակարգիչ մոնիտորով, դահլիճին՝ վարագույրներ: Դպրոցում դիզայնի խմբակի ստեղծում, նյութերի տրամադրում, մանկապարտեզին՝ անկողնու պարագաներ	1,741,700 դրամ
9	Վարդաբլուր	Նկարչական խմբակին հատկացվել է պարագաներ, կիրակնօրյա դպրոցին՝ սինթեզատոր, հեռուստացույց, ԴՎԴ նվազարկիչ, ամբուլատորիային՝ ԷԿԳ	589,300 դրամ
10	Հոբարձի	Մանկապարտեզին տրամադրվել է գորգ, ամբուլատորիային՝ մանկական սեղան, գազի վառարան, կշեռք	257,000 դրամ
11	Գարգառ	Համակարգիչ՝ մոնիտորով եւ UPS, մանկապարտեզի վերանորոգման համար նյութեր	4,854,575 դրամ

12	Գյուլագարակ	Դպրոցին կից նախակրթարանին հատկացվել է գորգ, վարագույրներ, զարգացնող խաղեր, խոհանոցային վառարան, նկարչական եւ փայտամշակման խմբակներին պարագաներ, Ամբուլատորիային՝ 1 պահարան	283,100 դրամ
13	Լեռնահովիտ	Դպրոցի դահլիճին վարագույրներ, ամբուլատորիային՝ տոնոմետր, 3 աթոռ, բժշկական սեղան	173,000 դրամ
14	Բլագոդարնոյե	Ամբուլատորիային տրվել է տոնոմետր, 3 աթոռ, գյուկոմետր, կշեռք	55,000 դրամ
15	Պրիվոլնոյե	Դպրոցին կից նախակրթարանին 4 մանկական սեղան, 16 աթոռ, 2 պահարան, գորգ, սառնարան, հեռուստացույց, նվագարկիչ, վարագույրներ, գրասենյակային այլ պարագաներ, դիզայնի խմբակին՝ պարագաներ	835,450 դրամ
16	Սարչապետ	Ամբուլատորիային գյուկոմետր, տոնոմետր	21,000 դրամ
17	Ստեփանավան	մարզադպրոցի թեքահարթակի կառուցում և սանհանգույցի վերապլանավորման համար շինանյութի տրամադրում	214,900 դրամ
18	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	«Լոռե» փրկարարական ջոկատի օգնությամբ Առաջին Օգնության աղետների կանխարգելում թեմաներով դասընթացների կազմակերպում համայնքների ակտիվ խմբերի համար: Համայնքի աղետների կառավարման պլանի ստեղծում մասնակցային մեթոդով	1,288,400 դրամ
19	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Բոլոր շահառու 10 համայնքներում միջոցառումներ կազմակերպելու աջակցություն (Ամանոր, Հունիսի 1, Սուրբ Զատիկ և այլ)	391,500 դրամ
20	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Դիտակտիկ նյութերի տրամադրում շահառու համայնքների բոլոր դպրոցներին և նախակրթությունարաններին /գրականություն, խաղեր, քարտեզներ և այլ	595,400 դրամ
21	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Քրիստոնեական դաստիարակությանն ուղղված ծրագրերի շրջանակներում գույքային աջակցություն (Առաքելական եկեղեցի)	242,290 դրամ
22	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Անչափահաս իրավախախտների մասնագիտական ուսուցում	1,621,980 դրամ
23	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Սոցաշխատողների աշխատավարձ	5,040,000 դրամ

24	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքրի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Բնապահպանական միջոցառումներ	166,000 դրամ
25	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքրի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Դպրոցների բյուջետավորում, կառավարում դասընթացներ	155,000 դրամ
26	Աքրի	Դպրոցի ձևավորման խմբակի ստեղծում/+դասընթացավար/, արվեստի խմբակին աջակցություն, համակարգչային տեխնիկայի, սպորտ գույքի, ըմբշտամարտի խմբակին սպորտային գույքի տրամադրում, մանկապարտեզի խաղահրապարակի վերանորոգում	1,120,158 դրամ ՎՎԻ ներդրում, 40,800 դրամ համայնքի ներդրում
27	Ախթալա	Համայնքի դպրոցների արտադասարանական փայտամշակման, արհեստագործական և ձևավորման խմբակներ /+դասընթացավար/, թիվ 2 դպրոցին համակարգչային տեխնիկա	1,578,310 դրամ
28	Մղարթ	Դպրոցին տրամադրվել է համակարգչային տեխնիկա	48,000 դրամ
29	Քարինջ	Դպրոցին տրամադրվել է պրոյեկտոր, համայնքում սելավատարի համար խողովակների տրամադրում	503,360 դրամ
30	Այրում	Դպրոցին տրամադրվել է գրապահարան, աջակցություն է ցուցաբերվել կարի եւ փայտամշակման խմբակներին, թեքահարթակի կառուցում	518,960 դրամ
31	Այրում, Մղարթ, Արեւածագ, Ճոճկան	Համայնքների նախակրթական հաստատություններին կահույքի տրամադրում	1,046,500 դրամ
32	Հաղպատ	Տուրիզմի զարգացմանն աջակցող ծրագրեր, դպրոցի փայտամշակման խմբակին աջակցում	294,100 դրամ
33	Ճոճկան	Դպրոցին ֆոտոխցիկի տրամադրում, մանկապարտեզին կախույքի տրամադրում	497,000 դրամ
34	Արեւածագ	Բուժկետին տրամադրվել է կահույք եւ բժշկական սարքավորումներ, Մանկապարտեզի թեքահարթակի կառուցում	470,000 դրամ
35	Ալավերդի	Ալավերդու ԱԿ-ին տրամադրվել է բուժսարքավորումներ	101,000 դրամ
36	Կաճաճկուտ	Տնտեսական զարգացում / 25 մեղվափեթակների տրամադրում 5 շահառուի//	2,389,000 դրամ
37	Ճոճկան	սառնարանային ագրեգատի տեղադրում և հոսանքի կարգավորիչի տրամադրում, սառնարանի շինանյութի հատկացում	2,922,056 դրամ ՎՎԻ ներդրում, 267,600 դրամ համայնքի ներդրում

38	Ճոճկան	Ճոճկանի դպրոցի ջրագծի վերանորոգում	171,200 դրամ ՎՎԻ ներդրում, 358,800 դրամ համայնքի ներդրում
39	Արեւածագ	Դպրոցի դասասենյակների վերանորոգում	1,387,580 դրամ ՎՎԻ-ի ներդրում, 899,616 դրամ համայնքի ներդրում
40	Մղարթ	Դպրոցի դասասենյակների վերանորոգում	1,650,000 դրամ ՎՎԻ-ի ներդրում, 868,746 դրամ համայնքի ներդրում
41	Աքրի, Կաճաճկուտ	Համայնքների դպրոցների սանհանգույցների վերանորոգում	832,300 դրամ ՎՎԻ ներդրում, 771,324 դրամ համայնքների ներդրում
42	Աքրի, Ախթալա	Համայնքների մանկապարտեզներին տրամադրվել է սպորտային գույք	55,000 դրամ
43	Հաղպատ	Դպրոցի գրադարանի վերանորոգում, բուժկետի եւ մշակույթի տան սանհանգույցների վերանորոգում	391,930 դրամ ՎՎԻ ներդրում, 531,353 դրամ համայնքների ներդրում
44	Քարինջ	Դպրոցի խմելու ջրի վերանորոգման, դպրոցի թեքահարթակի կառուցում	507,900 դրամ ՎՎԻ ներդրում, 334,000 դրամ համայնքների ներդրում
45	Քարինջ	Խաղահրապարակների վերանորոգում, խաղասարքերի տրամադրում,	218,285 դրամ ՎՎԻ ներդրում, 191,160 դրամ համայնքների ներդրում
46	Քարինջ	Մանկապարտեզին սառնարանի տրամադրում	75,000 դրամ ՎՎԻ ներդրում, 60,000 դրամ համայնքների ներդրում
47	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքրի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Ամառային ճամբարներ շահառու համայնքների դպրոցականների համար	1,878,800 դրամ
48	Ախթալա	Ախթալայի 2-րդ նախակրթարանի վերանորոգում	2,260,000 դրամ ՎՎԻ ներդրում, 2,753,860 դրամ համայնքի ներդրում

49	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Հանդիպում, կլոր սեղան քննարկում սոցիալական հաշվետվողականության մեխանիզմները համայնքներում	100,000 դրամ
50	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Քայլ առ քայլ ԲՀ՝ համայնքների նախակրթարանների անձնակազմի վերապատրաստում նոր մեթոդիկաներով	365,400 դրամ
51	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Պատանեկան Նվաճումներ՝ Տնտեսագիտության հիմունքների դասավանդում դպրոցներում	741,500 դրամ
52		Դպրոցի համակարգչային ուսուցիչների վերապատրաստում 7 համայնքներում	225,000 դրամ
53	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Բանջարաբոստանային կուլտուրաների աճեցում նոր տեխնոլոգիաների / մեթոդների կիրառմամբ	7,220,000 դրամ
54	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Դպրոցների խմբակներին, միջոցառումներին, ամառային ճամբարներին	7,525,106 դրամ
55	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Բուժհիմնարկներին գրականություն և պարագաներ	1,419,193 դրամ
56	Արեւածագ, Ախթալա, Այրում, Աքորի, Ճոճկան, Քարկոփ, Քարինջ, Օձուն, Մղարթ, Հաղպատ, Կաճաճկուտ	Անապահով ընտանիքներին հագուստի տրամադրում	13,716,087 դրամ